26 ՄԱՐՏ 2013 ԵՐԵՔՇԱԲԹԻ 45(5128)

Ազգ
Azg

ISSN: 1829-1651

# Ռագըպ Զարաքօլու. «Լռության պատը» պետք է քանդվի

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մարդու իրավունքների եւ արդարության պաշտպան, բազմաթիվ գրքերի եւ աշխատությունների հեղինակ Ռագըպ Զարաքօլուն Երեւանում էր՝ մասնակցելու Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կազմակերպած «Հայոց ցեղասպանություն. մարտահրավերներ հարյուրամյակից առաջ» խորագրով գիտաժողովին: «**Ազգ**»-ի հետ հանդիպումն էլ գիտաժողովի շրջանակներում էր: Խոսելով այսօր



Թուրքիայում Հայոց ցեղասպանության ճանաչման ու ընդունման եւ թուրքական իշխանության վերաբերմունքի մասին՝ թուրք ցեղասպանագետը փաստեց, որ երկրում որեւէ փոփոխություն չկա, եւ ցեղասպանության հարցը շարունակում է մնալ խնդրահարույց:

«Շատ քիչ համարձակ հրատարակիչների ջանքերով Թուրքիայում այսօր հրատարակվում են գրքեր Հայոց ցեղասպանության մասին, սակայն դա բավարար չէ: Թուրքիայում շարունակվում է իրավաբանական պատերազմը: Սակայն այս պայքարի մեջ պետք չէ ընկճվել, քանի որ մենք հիմքեր ունենք միջազգային եւ ազգային իրավաբանական տեսակետից: Թուրքիան 1940-ին ՄԱԿ-ի ընդունած ցեղասպանության մասին կոնվենցիայի առաջին ընդունողներից է: Միգուցե կոնվենցիան ընդունելու ժամանակ Թուրքիայում ոչ ոք չէ՞ր հիշում Հայոց ցեղասպանության մասին, եւ, համաձայն ազգային մի շարք օրենքների, Թուրքիայում ցեղասպանությունը համարվում է հանցագործություն, մինչդեռ Հայոց ցեղասպանությունը Թուրքիայի ազգային ապահովության քաղաքականության կարեւոր մասնիկն է եւ ժխտողականության քաղաքականության աշխատանքները կոորդինացնում է ստեղծված բարձրաստիճան կոմիտեն: Այդ կոմիտեն ստեղծվել է 2001-ին, այսօր պասիվ վիճակում է, բայց գոյություն ունի: Թուրքիայում մի ամբողջ ինստիտուտ կա, որ մերժում է ցեղասպանությունը: Հայոց ցեղասպանության ընդունումը Թուրքիայում համարվում է դավաճանություն ազգի եւ պետության նկատմամբ: Պատկերացրեք՝ որեւէ համալսարանի պրոֆեսոր կամ դասախոս հանդգնի այս պայմաններում աշխատել կամ կարծիք հայտնել: Դա գրեթե անհնար է, միայն համարձակներն են հանդգնում արտահայտվել: Սա խանգարում է խոսքի ազատությանը: Ես կարծում եմ, որ պայքարի առաջին արդյունքն այս կոմիտեի վերացումն է», ասում է Զարաքօլուն՝ նշելով, որ Ստամբուլի համալսարաններից մեկը մեկ տարվա ընթացքում Հայոց ցեղասպանության վերաբերյալ 22 աշխատանք է հրատարակել, եւ դրանցից միայն երկուսը ժխտողական չէին: «Սա ընդամենը մեկ համալսարանի վիճակագրությունն է, իսկ Թուրքիայում նման հեղինակավոր համալսարանները շատ են»: *Տես էջ 2*

# Նամակ-նամակ

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ուրբաթ օրը Րաֆֆի Հովհաննիսյանն առաջարկներ էր ուղղել նախագահ Սարգսյանին, որտեղ, փաստորեն, համարելով, որ արտահերթ նախագահական ընտրությունների իր առաջարկը հազիվ թե հնարավոր դառնա, ակնարկել էր, թե Սերժ Սարգսյանի դե ֆակտո նախագահությունը կարող է ընդունել, եթե ընդունելի լինեն իր մյուս առաջարկները (ավելի շուտ այս մասին ասել էր առաջարկների ծրարը Ազատության հրապարակում ներկայացնելիս): Նա առաջարկում էր սահմանադրական փոփոխություններից եւ համամասնական կարգի անցնելուց հետո արտահերթ խորհրդարանական ընտրություններ, մի շարք ոլորտների ղեկավարների եւ 5 մարզպետի նշանակում՝ իր ներկայացրած կադրերով: Մինչ քաղաքական ուժերը, իրենց ուղղվածությանն ու շահին համապատասխան, քննարկում էին այս առաջարկները տրամագծորեն տարբեր տեսակետներից, մինչ մի շարք ՀՀԿ-ականներ անլուրջ էին համարում Հովհաննիսյանի առաջարկները եւ կարծիք հայտնում, որ նախագահ Սարգսյանը հազիվ թե պատասխանի այդ անլուրջ առաջարկներին ու փաստորեն հերթական անգամ սխալվում էին, Սերժ Սարգսյանը երեկ պատասխանեց Ր. Հովհաննիսյանին: Տողատակերը նկատելու համար նախագահի պատասխան նամակը ներկայացնենք ամբողջությամբ. «Շնորհակալ եմ մեր հանդիպման ժամանակ արված իմ առաջարկությունը վերջապես ընդունելու եւ Ձեր մտքերը թղթին հանձնելու ու փոխանցելու համար: Որքան էլ ինձ հասցեագրված գրավոր նյութը հեռու է պետության եւ պետական իշխանության ձեւավորման վերաբերյալ պատշաճ պատկերացումներից եւ ուղղակիորեն հակասում է գործող սահմանադրական կարգավորումներին, այն, այդուհանդերձ, կարող է օգնել արդյունավետ երկխոսություն սկսելու համար: Ինձ ուրախացնում է, որ Դուք ունեք նաեւ ուժեղ ընդդիմությանը հարիր լուրջ վերահսկողական գործառույթների ստանձնման պատրաստակամություն, եւ այդ հարցում մեր կարծիքները կարծես բավականաչափ մոտ են: Ես վստահ եմ, որ եթե մենք սկսենք միասին նպատակադրված աշխատել, հիմնվելով պատկերացումների ընդհանրությունների վրա, հաստատապես արդյունքի կհասնենք: *Տես էջ 3*




# Հայաստանի նախաձեռնած «Ցեղասպանության կանխարգելման» բանաձեւը՝ կոնսենսուսով

**Մարտի 22-ին Ժնեւում՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի 22-րդ նստաշրջանում կոնսենսուսով ընդունվել է Հայաստանի նախաձեռնությամբ առաջադրված ցեղասպանության կանխարգելման վերաբերյալ բանաձեւը («Prevention of genocide»): Բանաձեւի ընդունումը խորհրդանշական է այն առումով, որ այս տարի լրանում է ցեղասպանության կանխարգելման եւ պատժման մասին կոնվենցիայի 65-ամյակը:**

**Ըստ արտգործնախարարության հաղորդագրության՝ Հայաստանը մշտապես ՄԱԿ-ի շրջանակներում հանդես է եկել ցեղասպանության կանխարգելման վերաբերյալ նախաձեռնություններով, ներկայացնելով բանաձեւերի նախագծեր: Այդ նախաձեռնությունների արդյունքում Մարդու իրավունքների հանձնաժողովի կողմից 1998 թվականին ընդունվել են «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման եւ պատժման մասին կոնվենցիայի 50-ամյակին նվիրված», 1999 եւ 2001 թթ.՝ «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման եւ պատժման մասին» բանաձեւերը: 2008 թվականին Մարդու իրավունքների խորհրդի կողմից ընդունվել է «Ցեղասպանության կանխարգելման մասին» բանաձեւը:**

**Նշված բոլոր բանաձեւերն ընդունվել են կոնսենսուսով՝ վայելելով անդամ պետությունների լայն աջակցությունը:**

**Բանաձեւում առաջին անգամ անդրադարձ է կատարվում ցեղասպանության կանխարգելման հարցում ճշմարտության իրավունքի վերաբերյալ զարգացումներին՝ կարեւորելով ճշմարտության խրախուսումը ցեղասպանության կանխարգելման առումով եւ քաջալերելով պետություններին համագործակցել ճշմարտության, արդարադատության, վերականգնման եւ չկրկնման երաշխիքների խթանման հարցերով հատուկ զեկուցողի հետ: Բանաձեւում վերահաստատվում է համընդհանուր պարբերական դիտարկման մեխանիզմների կարեւորությունը՝ հրավիրելով պետություններին իրենց ազգային զեկույցներում ներկայացնելու տեղեկատվություն ցեղասպանության եւ այլ զանգվածային ոճրագործությունների կանխարգելման ուղղությամբ ձեռնարկված քայլերի մասին:**

**Հատուկ ուշադրություն է դարձվում ցեղասպանության կանխարգելման գործում կրթության, մասնավորապես կանխարգելիչ նշանակություն ունեցող կրթական ծրագրերի եւ նախագծերի իրականացմանը, կառավարությունների եւ ՄԱԿ-ի համապատասխան գրասենյակների տեխնիկական աջակցությանը:**

**Որպես կանխարգելիչ միջոցառում բանաձեւը կոչ է անում ՄԱԿ-ի անդամ երկրների կառավարություններին՝ սահմանել անցյալում կատարված ցեղասպանությունների զոհերի հիշատակի ազգային օրեր, որպեսզի նման սոսկալի հանցագործությունները երբեք չմոռացվեն:**

**Բանաձեւը լայն աջակցություն է ստացել, դրան համահեղինակ են հանդես եկել ՄԻԽ բոլոր տարածաշրջանային խմբերը ներկայացնող 54 պետություններ, այդ թվում՝ մեր հարեւան երկրներից միայն Վրաստանը:**

**Բանաձեւը համահեղինակելու համար բաց կմնա դեռեւս երկու շաբաթ:**

Վ. Պ.

# Շառլ Ազնավուրը կայցելի Թուրքիա, եթե բացեն սահմանը

Օրերս ֆրանսահայ աշխարհահռչակ երգիչ, Շվեյցարիայում ՀՀ դեսպան Շառլ Ազնավուրը La Libert պարբերականի հետ զրույցում ասել է. «Իմ երազանքն է այցելել Թուրքիա: Թուրքերի մասին ոչ մի վատ բան չեմ ասել, սակայն երբ խոսում եմ Ցեղասպանության մասին, քույրս եւ բարեկամներս ինձ ասում են, որ չայցելեմ այնտեղ, քանի որ ես ինձ դրանով կսպանեմ»,- եւ ավելացրել է, որ իր երազանքն է այցելել Թուրքիա, եւ ինքը կայցելի, եթե Թուրքիան բացի Հայաստանի հետ սահմանը:



Նա նշել է, որ տարիներ շարունակ իր թուրք ընկերներն իրեն հրավիրել են Թուրքիա:

«Եթե թուրքերը համաձայնեն բացել սահմանը, այդ դեպքում ես կգնամ, նույնիսկ եթե Ցեղասպանության ճանաչման հարցը լուծված չլինի: Սահմանի բացումը կթեթեւացներ շատերի հոգին»,- ավելացրել է նա:

Շառլ Ազնավուրը նշել է նաեւ, որ ինքը եղել է միայն Ստամբուլում, որտեղ երգել է երիտասարդ տարիներին, երբ դեռ սկսնակ էր. «Այդ ժամանակ նրանք պետք է նկատած չլինեին, որ ես հայ եմ»:

# Ցրտահարության վնասի չափի մասին դեռեւս հնարավոր չէ խոսել

Արարատյան դաշտում ջերմաստիճանի կտրուկ անկում է արձանագրվել, ինչի մասին օդերեւութաբանները նախապես զգուշացրել էին: Այդուհանդերձ, Արարատյան դաշտի տարբեր բնակավայրերից մեր ստացած տեղեկությունների համաձայն, որոշակի ցրտահարումներից խուսափել չի հաջողվել: Ըստ տարբեր գնահատականների, երեկվա դրությամբ հնարավոր է, որ ցրտահարությունից վնասված լինի ծիրանի բերքի 10-20 տոկոսը: Մյուս մշակաբույսերին վտանգ չի սպառնում, քանի որ ծաղկել են միայն ծիրանենիները: Ամեն դեպքում, սա շատ մոտավոր գնահատական է, հատկապես եթե նկատի ունենանք, որ ցրտահարման վտանգը առկա է եղել նաեւ այս գիշեր: Գյուղնախարարության պատասխանատուները երեկ հնարավոր չէին համարում ասել, թե բերքն ինչ չափով է վնասվել:



Գյուղատնտեսության նախարարությունը երեկ նաեւ հաղորդագրություն էր տարածել, որտեղ նշվում էր, որ հաշվի առնելով հնարավոր վտանգը, գյուղատնտեսության նախարարության համապատասխան ծառայություններն ու մասնագետները՝ նախարար Սերգո Կարապետյանի եւ փոխնախարարների գլխավորությամբ, եղել են Արարատի եւ Արմավիրի մարզերում, խորհրդատվական հանդիպումներ ունեցել համայնքների ղեկավարների ու այգետերերի հետ: Հնարավոր կորուստները նվազագույնի հասցնելու նպատակով խորհուրդ է տրվել այգիների հարակից հատվածներում, քամու ուղղությամբ, օգտագործելով բուսական կիսաչոր մնացորդները, ստեղծել կայուն ծխածածկույթ: Նշվում է, որ ողջ գիշեր դա արվել է:

Ա. Մ.

# Ոչխարների ոչ ռեւազային քնջուկը

Հայաստանյան որոշ արոտավայրերի եւ իրանական մանր եղջյուրավոր անասնատեսակների մի մասի համատեղման հայ պաշտոնյաների եւ իրանցի գործարարների միջեւ վերջին շրջանում ծավալված գործընթացները անգամ ներքաղաքական զարգացումների ֆոնին հաճախ քննարկվող հարցերից են. ինչո՞ւ ծագեց հանրային առումով գրեթե անհեթեթ այս խնդիրը:




Տողերիս հեղինակի կարծիքով՝ պատասխանը տեղավորվում է մերոնց անկարողությունից ու անզորությունից մինչեւ անփութության ու անհոգության սահմաններում: Չկարողանալով հիմնականում երբեմնի քոչվոր կենցաղ ունեցողներին հատուկ այս ոլորտում հայաստանյան հանրությանն անհրաժեշտ արդյունք ստեղծել, հայ պաշտոնյաների մերօրյա ներկայացուցիչները առաջնորդվել են այլոց օգնության ձեռք մեկնելու վեհ զգացումներով, բոլորովին հաշվի չառնելով, որ այդ այլք հիմնականում նրանք են, որոնց արյունակիցները իրենցն են համարում ոչ միայն մինչեւ իրանական սահման ձգվող արցախյան տարածքները, այլեւ բուն Հայաստանի զգալի մասը, եթե չասենք ողջ Հայաստանի Հանրապետությունը: Ինչո՞ւ ենք այսչափ կտրուկ եւ, թող ների ոմանց պարագայում, ասենք, կարճատես ու անհեռատես: Բացեք որեւէ պաշտոնական տեղեկագիրք, եւ պարզ կդառնա, որ, ասենք, հարեւան երկրի պարագայում 80 մլն բնակչության հաշվով 80 մլն մանր եղջյուրավոր է պահվում, երբ ՀՀ-ում թվերը համապատասխանաբար մոտ 3 մլն եւ 0,5 մլն են: Մենք նույնպես հաճույքով ոչխարի մսի խորոված ու խաշլամա կվայելենք, եթե դրա հնարավորությունը մեր պարենային խնդիրը լուծելու կոչված պետական այրերն ապահովեն: Ցավոք, նրանք դա չեն անում, թեեւ կոչված են, մեր մարդկանց վճարած հարկերից զգալի աշխատավարձեր են ստանում, լուսավոր ու տաքուկ աշխատասենյակներ ունեն, քարտուղարուհիներ ու օգնականներ, արտասահմանյան շքեղ ավտոմեքենաներից են օգտվում, գրանտներ են վայելում, արտերկրներից հարյուրմիլիոնավոր դրամների աջակցություններ են ստանում, իրենք են հաճախակի արտասահմանյան մասնագիտական եւ այլեւայլ ուղեւորությունների մեկնում: Կարծես ՀՀ համեստ բյուջեից մեր պարենային հարցի լուծման հնարավոր առավելագույն պայմաններն ստեղծված են, հարկավոր է արդյունք երաշխավորել, հայրենական արտադրության մթերքներով շուկան ապահովել, այդկերպ ապացուցել, որ հայ հանրության սպասելիքները իրականացվում են, մարդիկ թող արտագաղթելու մասին չմտածեն, այլ մեկնածներին հետ կանչեն... փոխարենը հրավերք է նախաձեռնվում, անվարան կարելի է պնդել, հարեւան երկրի հիմնականում ազերիներով բնակեցված հատվածի հետ: Ի՞նչ հիմնավորումով ու փաստարկումով. միայն այն, որ վարձակալած 1 հա-ի հաշվով 25 դոլար են խոստանում, դա ոչ միայն արոտավայրերին հասցված վնասը չի հատուցի, այլեւ պարտադրված կլինենք օր ու գիշեր տեսադաշտում պահել եկվորներին, քանզի նրանց ցեղակիցներից բանական ոչինչ չենք տեսնում ու լսում:

Գուցե տարօրինակ մտորումներից ձերբազատվենք եւ փորձենք հարցին տնտեսվարական առումով նայել: Թեեւ նշեցինք ոչխարի մսից խորովածի ու խաշլամայի հաճույքը վայելելու մասին, այսուհանդերձ հարկ է նկատել, որ հայաստանցիներս մանր եղջյուրավորի մսատեսակների օգտագործման հարցում այլ նախապատվություններ գրեթե չունենք, եթե առանձին բացառությունները նկատի չառնենք: Այստեղ առանձնանում է այս մսատեսակի վերջին տարիների գինը, որը անհասանելի է առնվազն 2,5 մլն հայաստանցիներին, մեր բնակչության բացարձակ մեծամասնությանը: Թերեւս վիճակն այլ լիներ, եթե ոլորտի պատասխանատու ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը նվազագույնը լուծեր իր կողմից իր իսկ առջեւ դրված խնդիրը, որն է՝ 2004 թ. ՀՀ կառավարության հաստատած գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարությունում 2010 թ. համար ամրագրած 1,1 մլն մանր եղջյուրավոր ունենալը, երբ 2013-ի հունվարի 1-ի դրությամբ այս թվի կեսն էլ չկա, այնինչ գլխաքանակն արդեն 1,3 մլն պետք է լիներ, քանզի վերջնաժամկետ 2015-ի համար նշված է 1,5 մլն գլուխ մանր եղջյուրավոր: Եվ ոչ մեկի պետքն էլ չէ, ոչ մեկից այս ձախողման համար պատասխան չի պահանջվում: Կամ բարի եղեք հայտարարել, որ նախկին նախարարները անիրագործելի կանխատեսումներ են արել, աշխատակազմին այս թվերն են պարտադրել, կամ ցույց տվեք վերջին տարիների ձեր հետեւողական աշխատանքի դրական արդյունքները: Անասնապահության որոշ թվերում անգամ 2003 թ.-ի ցուցանիշներն են նվազել, որը ոչ մի հիմնավոր բացատրություն չունի: Այլ երկրներում նման գործընթացը ներկայացվում է գերարտադրությունը կանխելու հիմնավորումով, որպիսի վիճակ ՀՀ-ում գոյություն չունի. Հայաստանը զգալի ծավալներով միս-մսամթերք ներմուծող երկիր է, երբ նրա 340 000 գյուղացիական տնտեսություններն անգործության են մատնված, զգալի մասն էլ նպաստառուի կարգավիճակում է:

ՀՀ պարենային ապահովության ու անվտանգության խնդիրները ահագնանում են, իսկ բարեփոխելու եւ բարելավելու կոչված բարձրագույն պաշտոնյաները դրանք չտեսնելու են տալիս. սա է մերօրյա իրողությունը, որը շարունակական բնույթ է ստանում: Եվ՝ մինչեւ ե՞րբ եւ մինչեւ ո՞ւր հարցը հնչում է ինքնաբերաբար:

**ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ**
**Երեւան**

ՋԱՎԱԽՔ

# Չախալյանն արձագանքում է Սաակաշվիլու «վախերին»



**Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլու համար վերջերս հայկականն ու այդ առումով առավել հաճախ հիշատակվող Չախալյան անունը գլխացավից վերածվել են պարանոյայի. երկրի «դժբախտությունն» էլ են հայերը, «անջատողականներն» էլ, «լրտեսներն» էլ: Ակնհայտ է, որ Սաակաշվիլու տակ ուժգնացող ճռռոցով տատանվող աթոռը վերեւներում էլ է ինչ-որ բան տատանում:**

«Որերս Վրաստանի նախագահի պաշտոնը զբաղեցնող անձը՝ Միխեիլ Սաակաշվիլին, անդրադառնալով ջավախահայության նկատմամբ իր քաղաքականությանը, հանդես եկավ հերթական անհեթեթ գնահատականներով իմ քաղաքական գործունեությանը վերաբերող փաստերի կապակցությամբ», մարտի 24-ին նման հայտարարությամբ հանդես է եկել ջավախահայ քաղաքական ակտիվիստ Վահագն Չախալյանը, որ քաղբանտարկյալի կարգավիճակից ազատ արձակվեց վրացական նոր իշխանությունների համաներմամբ:

Խոսքը նախորդ շաբաթավերջին «Իմեդի» վրացական հեռուստաընկերությանը տված հարցազրույցում Սաակաշվիլու արած հայտարարությունների մասին է, որոնցում Վրաստանի նախագահը, ի շարս Ջավախքում հայերենին տարածաշրջանային լեզվի կարգավիճակ տալու դեմ բերած «փաստարկների», նշել է, թե պետք չէր ազատ արձակել Չախալյանին, այլ միայն 6 տարի անց, երբ «Ջավախքում 10 նոր ՀԷԿ կլիներ, կյանքի մակարդակը 2-3 անգամ կբարձրանար, ու Ջավախքի բնակչության գերակշիռ մեծամասնությունը կխոսեր վրացերեն»:

Ասել է թե եթե այս ամենը չիրականացավ՝ Սաակաշվիլին արդեն իսկ «մեղավոր» է, թեեւ դժվար է պատկերացնել, թե Չախալյանն ինչպես է կանգնեցնելու ՀԷԿ-երի կառուցումը կամ զսպելու կենսամակարդակի բարձրացումը, որ տասնյակ տարիներ վրացական իշխանությունները խոստանում են, բայց Ախալքալաքի կարտոֆիլը գնելու Սաակաշվիլու խոստման նման արագ մոռանում:

Չախալյանի հայտարարության համաձայն՝ իր ազատ արձակվելուց հետո Սաակաշվիլու կողմից նրա հասցեին շարունակաբար հնչեցվող զրպարտչական բնույթի մեղադրանքները գալիս են եւս մեկ անգամ հաստատելու, որ Չախալյանին ազատազրկման են ենթարկել բացառապես քաղաքական նկատառումներով, որ խաղաղ եւ օրինական միջոցներով պայքարել է Վրաստանի հայ բնակչության իրավունքների պաշտպանության համար: «Սաակաշվիլին նորից ու նորից փաստում է, որ ինձ բանտարկել է ազգային փոքրամասնությունների գծով երկրի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունները չկատարելու եւ դրա դեմ ջավախահայության արդար բողոքի ձայնը լռեցնելու նպատակով», ասվում է հայտարարությամբ:

«Սաակաշվիլին իմ վերաբերյալ ապատեղեկատվություն եւ սուտ տարածելով այսօր փորձում է կոծկել այն պարզ իրողությունը, որ ինչպես ներքին եւ արտաքին շատ այլ հարցերում, այս հարցում եւս իր բռնած քաղաքական կուրսը ձախողվել է: Շինծու մեղադրանքներով ինձ դատապարտելը, ջավախահայ այլ քաղաքական գործիչների նկատմամբ հետապնդումները ունեցան հակառակ արդյունք՝ դրանք օգնեցին սեւեռել ջավախահայության իրավունքների ոտնահարման խնդրի նկատմամբ միջազգային հանրության ուշադրությունը», գտնում է Չախալյանը:

Ըստ նրա՝ իր ազատ արձակումը վրաց նոր իշխանությունների բարի կամքի դրսեւորում էր, բայց նաեւ մեծ չափով պայմանավորված էր Ջավախքի բնակչության շարունակական կոչերով եւ միջազգային հանրային կարծիքի ճնշմամբ, մասնավորապես՝ միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների կողմից Չախալյանին քաղբանտարկյալ ճանաչելով, ԱՄՆ պետքարտուղարության կողմից հրատարակվող մարդու իրավունքների ամենամյա զեկույցներում ջավախահայ ակտիվիստի խնդրի արծարծմամբ, Ֆրանսիայի խորհրդարանում, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում Չախալյանի խնդրի բարձրացմամբ եւ այլն:

«Ինչպես եւ Սաակաշվիլու կողմից իմ հասցեին նախկինում արված բոլոր հայտարարությունները՝ այս հայտարարությունը եւս իմ փաստաբանները որպես լրացուցիչ ապացույց ուղարկելու են Մարդու իրավունքների եվրոպական դատարան, որտեղ ներկայումս քննվում է իմ բողոքը», հավաստիացրել է Վահագն Չախալյանը:

Հիշեցնենք, որ դեռեւս հունվարի վերջին Չախալյանը ստիպված էր առանձին հայտարարությամբ հանդես գալ նույն Սաակաշվիլու առավել «թունդ» մեղադրանքների առնչությամբ, թե Չախալյանը «ռուսական լրտես է», «գործակալ»: Նախորդ հայտարարությամբ նոր մեղադրանքներով հանդես եկող արդեն նախկին իշխանություն ներկայացնող Սաակաշվիլուն Չախալյանը հիշեցրել էր, որ իրեն առաջադրված շինծու մեղադրանքների շարքում անգամ չի էլ նշվել «լրտես» լինելու որեւէ մեղադրանք:

Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

# Ռագըփ Զարաքօլու. «Լռության պատը» պետք է քանդվի

*1-ին էջից*

Զարաքոլուն շեշտում է, որ թուրքական համալսարանները չեն մասնագիտանում Հայոց ցեղասպանության հարցով: «Այդ երկարամյա ժխտման հետեւանքով այսօր թուրքական համալսարաններում ունենք մի իրավիճակ, երբ Հայոց ցեղասպանության մերժումը վերածվեց ընդհանրապես «ցեղասպանություն» գաղափարը կամ հանցանքը մերժելուն: Թուրքական համալսարաններում ցեղասպանությունների ուսումնասիրման որեւէ կառույց չկա: Թուրքական համալսարաններում հայկական լեզվի եւ մշակույթի հետ կապված լուրջ աշխատանքներ չեն տարվում: 1980-ի հեղաշրջումից հետո Հայոց ցեղասպանության ուրացումը վերածվեց հայության ուրացման, եւ պատմության ցավալի էջերը ջնջվեցին: Այս ֆոնին, մենք, որպես թուրք մտավորականներ, Հայոց ցեղասպանության հարյուրամյակի շեմին լուրջ պարտավորություններ ունենք քանդելու այդ «լռության պատը»»:

Զարաքոլուն շեշտում է, որ հակառակ թուրքական կողմի ժխտողական քաղաքականությանը, հատկապես տարիքով թուրքերը տեղյակ են Հայոց ցեղասպանության մասին՝ լսել են, կարդացել, իսկ երիտասարդությունն այս հարցից շատ է ազդվում, նեղվում: «Կարծում եմ՝ քաղաքացիական եւ հասարակական կազմակերպությունների ուսին շատ մեծ բեռ է ընկած, նրանք լուրջ գործ ունեն կատարելու այս ուղղությամբ: Ես նաեւ կարող եմ փաստել, որ մտավորական խավի մեջ արթնացում կա, գաղափարների ու մտքի հասունացում, եւ դա շատ կարեւոր է, քանի որ մտավորական խավը պետք է հասարակության մեջ դիրքորոշումներ մտցնի ու կարծիքներ փոխի»:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

## Անցուդարձ

1-ին էջից

Իմ հորդորն է Ձեզ` դադարեցրեք, խնդրում եմ, հացադուլը, մեկ-երկու օր կազդուրվեք, եւ մենք միասին, թուղթ ու գրիչով, հանգիստ, առանց շոուների սկսենք աշխատել, լուրջ աշխատել` անգամ հիմք ընդունելով հենց Ձեր կողմից առաջարկված, այս պահին թեկուզեւ շատ հում, շարադրանքը»:

Եթե նկատեցիք` Րաֆֆու առաջարկների մի մասը կարող է եւ քննարկելի դառնալ նախագահի համար, «վերահսկողության մասին: Թեեւ իշխող` ՀՀԿ կուսակցությունը համարում է, որ քաղաքային ավագանի եւ քաղաքապետ է ընտրվելու ընդամենը, սակայն բոլորին պարզ է, որ դա այդպես չէ, եւ Երեւանի ավագանու ընտրությունները նոր սրբագրումներ են անելու քաղաքական պատկերում: Եթե ԲՀԿ-ն հետ էր քաշվել նախագահական ընտրություններին ու ողջ ներուժը զսպել, այժմ ի գործ է դնելու` քանի որ խնդիր ունի ապացուցելու, թե իր վարկանիշը բոլորովին էլ չի ընկել նախագահական

Եվ պետք չէ այս բոլորը դիտարկել ընդդիմությանը զիջելու համատեքստում` այլ միայն հասարկության լայն կոնսոլիդացիայի, ինչպես նաեւ` արդյունավետ կառավարման: Ի վերջո` ո՞վ է ասել, որ միայն ՀՀԿ-ականները պետք է կառավարեն, կամ նախագահը միայն ՀՀԿ-ականների նախագահն է (հենց նախագահ Սարգսյանը նշեց, որ ինքը ե՛ւ իրեն ընտրողների, ե՛ւ չընտրողների նախագահն է): Եվ պետք չէ այստեղ հիշել հայտնի քաղաքագիտական կանոնները, որոնք մեծ

# Նամակ-նամակ

կան գործառույթների ստանձնման» մասով, օրինակ, բացի դրանից` այլ առաջարկ կա` «պատկերացումների ընդհանրությունների վրա հիմնվելով աշխատել», իսկ որ ավելի կարեւոր է` նամակի տոնը թույլ է տալիս հուսալ, որ Րաֆֆին միգուցե կդադարեցնի հացադուլը, քանի որ, իսկապես, չէինք ուզենա նրա առողջությունը վտանգված տեսնել: Իսկ նախագահի ասած` թուղթուգրիչով աշխատելու հիմք ընդունելով Րաֆֆու` «այս պահին թեկուզեւ հում շարադրանքը» ձեւակերպումը ցույց է տալիս, որ, բանակցելու կամ երկխոսելու դռները բաց են, ու սա լավ է:



Աջից՝ Րաֆֆի Հովհաննիսյանը, կինը, որդին, հայրը

Երեկ Րաֆֆի Հովհաննիսյանը Ազատության հրապարակի քաղաքացիական ֆորումում նշեց, թե նամակին պատասխանելու է այսօր, կրկին նամակով, իսկ չորեքշաբթի էլ ասուլիս կտա:

Հիմա այս էպիստոլյար ժանրի մեջ տուրեւառը կարո՞ղ է նպաստել, որ ինչ-որ ընդհանուր պատկերացումներ, իրոք, ձեւավորվեն, ինչն իսկապես ավելի լավ է, քան առճակատումը եւ կարող է մեղմել մթնոլորտը, իրացնելով նաեւ Րաֆֆուն տրված քվեները : Սա պետք է երեւա արդեն Րաֆֆու պատասխանից, իսկ Հայաստանում առկա անցյալ փորձը ցույց է տվել` առճակատումը կամաց-կամաց բերում է ի վերջո ընտրողների քվեի փոշիացմանը եւ ոչնչի:

Սակայն այս բոլորն այնքան էլ անամպ չէ, ինչպես կարող է թվալ առաջին հայացքից: Երկխոսություն լինի, թե ոչ, պայմանավորվածություններ ձեռք բերվեն, թե ոչ, դրանք կարող են առարկայական լինել մինչեւ Երեւանի ավագանու ընտրությունները: Քանի որ նախագահի եւ նրա գլխավորած ուժի հետ երկխոսելու կամ մրցակցելու այլ հայտ ներկայացնող եւս կա, որի մասին ոչ նախագահը, ոչ Րաֆֆին որեւէ բան, ճիշտ է, չեն ասում, բայց դա տեղի է ունենալու շատ մոտիկ ժամանակի մեջ` ավագանու ընտրություններին, եւ այդ հայտը ներկայացնողը ԲՀԿ-ն է: Ինչու չէ` նաեւ ավագանու ընտրություններին մասնակից մյուս կուսակցությունները: Ու հնարավոր է` ավագանու ընտրություններից հետո քաղաքական քարտեզը վերստին փոփոխությունների ենթարկվի, ու դրանից հետո միայն կարելի կլինի խոսել առկա իրողությունների մասին:

Այն հանգամանքը, որ չնայած հետընտրական պահանջներին` Րաֆֆի Հովհաննիսյանը կողմնակիցները մասնակցելու են քաղաքային ավագանու ընտրություններին, հենց նշանակում է մայիսի 5-ի ընտրությունների` քաղաքական մեծ նշանակության ընտրություններին չմասնակցելով եւ չի պատրաստվում իր ընտրազանգվածը զիջելու որեւէ մեկին: ԲՀԿ-ն, այդպիսով, խանգարելու է ե՛ւ րաֆֆիականներին, ե՛ւ մյուս ընդդիմադիրներին, ե՛ւ ՀՀԿ-ին` ընտրողին էլ շեղելով կենտրոնանալ եւ կրկնել խորհրդարանական ընտրությունների սխրանքը: Եվ մնում է հասկանալ, արդյոք ընտրություններից հետո այս անգամ Վարդան Օսկանյա՞նն է հացադուլ անելու:

Հիմա վերադառնանք Րաֆֆի Հովհաննիսյանի առաջարկներին: Միգուցե նախագահ Սարգսյանն, իսկապես, նրա առաջարկների վրա մտմտա. իսկապես այդքան երկար տարիներ պաշտոնավարող (նրանց մի մասն առնվազն) մարզպետներն ո՞ւմ են պետք, որոնց մի մասը տեղերում ստեղծել է Սարգսյանի ասած «գաղջ մթնոլորտը»: Միգուցե նոր մարդկա՞նց հնարավորություն տրվի թարմ կառավարում իրականացնելու մարզերում` կասեցնելով արդեն մարդու գլխից բարձր դժգոհությունն ու արտագաղթը, ի վերջո մարզպետները հո այդ պաշտոններն իրենց հոր տնից չեն բերել: Միգուցե Րաֆֆին դառնա միջնորդ առավել լայն շերտերից` այլ կուսակցությունների, քաղաքացիական հասարակության կադրեր մատուցելով թարմացնելու երկրի կառավարման մասնագետների բանկը: Մաքսային եւ հարկային ծառայությունները ղեկավարներին, ի վերջո, կարելի էր փոխել, թեեւ այս դեպքում հավատացած ենք, որ առավելի ճիշտ է բյուջե լցնող այս գերատեսչությունների ղեկավարներին տնտեսական կուրս իրականացնող գործադիրի ղեկավարը (նախագահը) նշանակի: Իսկ վերահսկողությունն, այո, կարել է փոխանցել, ինչպես, ի դեպ, եւ կրթությունը, մշակույթը եւ այլն: Միգուցե` նաեւ դատախազությունը, որպես զսպող եւ հակակշռող օղակ: Սակայն ոչ երբեք երկրի ուժային կառույցները, անվտանգությունը եւ արտաքին գերատեսչութունը, որոնք սահմանադրությամբ եւ բուն իմաստով էլ երկրի, պետության եւ նրա նախագահի անձնագիրն են:

եւ տնտեսապես կայացած երկրների համար են, երբ մի իշխող ուժին եւ նրա իրականացրած քաղաքականությանը փոխարինում է մյուսը: Մեր դեպքում` էքստրեմալ կառավարում է պետք, որ կկասեցնի արտագաղթը, ռեսուրսների փոշիացումը կկանգնեցնի, երկիրը կփրկի կողոպտվելուց եւ դատարկվող կաթսա դառնալուց, ապահովելով նաեւ համերաշխության մթնոլորտ եւ գոնե մի փոքր արդարություն: Այլապես` մեր կյանքում առկա կեղծիքը, թալանը, հովանավորչությունը ելել ու խեղդում են մեզ, նրանք ամեն տեղ են, եւ չի կարելի այս ամենին նայել ու անվրդով դեմքով ժողովրդավարական ուղի բռնելու մասին խոսել: Ավելի շատ` մեր երկրում պարտոկրատիա է, որը հաղթահարելու առիթ կարող են դառնալ Րաֆֆու առաջարկները:

Մի հետաքրքրական ինտերմեդիա. Պարույր Հայրիկյանը, որի առողջական վիճակն այնքան էլ լավ չէ, ու հնարավոր է, որ ընդունի արտերկրից բուժման հրավերները, ֆեյսբուքի իր էջում, մինչեւ նախագահ Սարգսյանի պատասխանը Րաֆֆուն, անդրադարձել էր վերջինիս առաջարկներին` Ր. Հովհաննիսյանի եւ Ս. Սարգսյանի երկխոսությունն ամեն ինչից վեր դասելու կեցվածքը բնականոն համարելով, քանի որ հայ ժողովրդին սպառնացող մարտահրավերներն, իր խոսքով, աննախադեպ են: Եվ իր կողմից հայտարարում է, որ պատրաստ է գլխավորել սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովը: Ինչպես ասում են` Պարույրը կտրեց Րաֆֆուն ու Սերժին:

Ի՞նչ է դուրս գալիս: Փաստորեն Րաֆֆին նախագահի առաջարկած երրորդ տարբերակն ընտրեց` ներգրավվել իշխանության մեջ եւ համատեղ ջանքերով լուծել խնդիրները, ինչպես էլ ձեւակերպի իր առաջարկները Ր. Հովհաննիսյանը, սա փաստ է: Ու դրա մեջ ոչ մի վատ բան չկա` եթե դա օգնելու է երկրին ու առկա մթնոլորտի հաղթահարմանը:

ՆԵՐՀԱՅԿԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

# Ինչպե՞ս են ինտեգրվում սիրիահայերը հայաստանյան իրականությանը

## *Տանը նստելու եւ դժգոհելու փոխարեն նրանք նախընտրում են աշխատել եւ ստեղծել*

**Սիրիայում ներքին անկայունությունն ու պատերազմական գործողությունները հարկադրեցին այդ երկիրը լքել նաեւ մեր հայրենակիցներից շատերին: Սիրիան լքած հայերից մոտ 6 հազարը ժամանեցին Հայաստանի Հանրապետություն: Անշուշտ, ցավալի է, որ մեր հայրենակիցները նույնպես հայտնվեցին պատերազմական գործողությունների թատերաբեմում եւ արդեն մի քանի տասնյակ զոհեր տվեցին: Մյուս կողմից էլ, որոշակի մխիթարություն պետք է համարել, որ նրանց մի մասը եկավ Հայաստան: Թե որքա՞ն է որոշել ընդմիշտ իր կյանքը հայրենիքի հետ կապել, դեռեւս անհայտ է, քանի դեռ սիրիական ճգնաժամը շարունակվում է, բայց որ նրանց մի մասն արդեն իսկ բուռն գործունեություն է սկսել Հայաստանում, փաստ է եւ ուրախալի փաստ:**

**Նախ, հանուն արդարության ասենք, որ պետության կողմից մի շարք քայլեր արվեցին, որպեսզի Հայաստան եկած սիրիահայերը կարողանան ինտեգրվել հայրենիքին: Նրանց համար ստեղծվեցին կրթության շարունակման, աշխատանքի անցնելու հնարավորություններ, ազատվեցին որոշ տուրքերից եւ պետական վճարներից, ցուցաբերվում է մարդասիրական օգնություն պետական եւ ոչ պետական կառույցների կողմից եւ այլն: Իհարկե, ամեն ինչ իդեալական չէ, բայց այսօրվա Հայաստանի Հանրապետության հնարավորությունների սահմաններում արվեց հնարավորը: Եթե համեմատենք սիրիահայերի նկատմամբ պետական քաղաքականությունը 90-ականներին Հայաստան բռնագաղթած ադրբեջանահայերի եւ ավելի ուշ իրաքահայերի հանդեպ պետական քաղաքականության հետ, ապա տարբերություններն ուղղակի ահռելի են:**

**Հասկանալի է, որ 300 հազարից ավելի ադրբեջանահայության խնդիրները լուծելն անհամեմատ ծանր էր հատկապես 90-ականների Հայաստանում: Ինչով էլ պայմանավորված` նրանց մի մասը հետագայում լքեց մեր երկիրը: Սակայն, ինչպես ընդհանուր առմամբ ամբողջ բնակչության նկատմամբ, այնպես էլ Ադրբեջանից եկածների հանդեպ այդ տարիներին պետական քաղաքականությունը կարելի էր բնորոշել մի բառով` անտարբերություն: Չենք ասում, որ կարելի էր լուծել նրանց բնակարանային խնդիրը, բայց կարելի էր լուծել փախստականների հայերենի ուսուցման, իրավական կարգավիճակի հստակեցման, որոշակի արտոնությունների տրամադրման հարցերը, այնպես` ինչպես հիմա արվում է սիրիահայերի համար: Այդ դեպքում գուցե ադրբեջանահայերից շատերը չլքեին Հայաստանը, եթե զգային գոնե պետության հոգատար վերաբերմունքը խոշոր ծախսեր չենթադրող հարցերում;**

**Ինչ վերաբերում է 90-ականներին Հայաստան եկած ադրբեջանահայերի եւ այժմ եկած սիրիահայերի նկատմամբ Հայաստանի բնակչության վերաբերմունքին, ապա այն եւս որոշակիորեն տարբերվում է: Սիրիահայերի նկատմամբ, ի տարբերություն պետական մոտեցման, մեր հասարակությունը մի տեսակ անտարբեր է: Դա չի նշանակում, որ չեն եղել ընդգծված դրական վերաբերմունքից մինչեւ ընդգծված բացասական վերաբերմունքի դրսեւորումներ, սակայն, ընդհանուր առմամբ գերակշռում է անտարբերությունը:**

**90-ականներին Հայաստան եկած ադրբեջանահայերի նկատմամբ Հայաստանի բնակչությունը ավելի բացասաբար էր տրամադրված, չհաշված սկզբնական շրջանում ջարդերից փախածների նկատմամբ ցուցաբերվող համընդհանուր հոգատարությունը: Հայաստանյան հասարակության` փախստականների նկատմամբ բացասական վերաբերմունքը պայմանավորված էր նաեւ վերջիններիս կողմից Հայաստանի իրականությունը վատ պատկերացնելով եւ իրենց բոլոր խնդիրների անհապաղ լուծման պահանջներով: Այն դեպքում, երբ սոցիալական, կենցաղային եւ բազում այլ չլուծվող խնդիրներ ուներ նաեւ տեղի բնակչությունը: Ադրբեջանից Հայաստան էր եկել հիմնականում քաղաքային բնակչություն, եւ նրանց բնակարանային խնդիրները բավարարել Երեւանում պարզապես անհնար էր:**

*Տես էջ 4*

# Օգնություն տուժած ընտանիքին

Փետրվարի 27-ի գիշերը Տավուշի մարզի Կիրանց գյուղում հրդեհի հետեւանքով ամբողջությամբ այրվել է Տիգրան Ավալյանին պատկանող տունը: Բարեբախտաբար մարդկային կորուստ չի եղել, բայց 5 անձից բաղկացած ընտանիքն այժմ մնացել է անօթեւան, առանց որեւէ նյութական միջոցի:

«Արմենիա TV» հեռուստաընկերությունը, որը նաեւ հեռարձակվում է հանրապետությունից դուրս, վերջերս լուսաբանեց դեպքը: Այդ լուրի մասին տեղեկացավ Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը եւ շտապեց արձագանքել: Անմիջապես կապ հաստատելով Ռուսաստանի հայերի միության եւ Համաշխարհային հայկական կոնգրեսի փոխնախագահ Վլադիմիր Աղայանի հետ` խնդրեց վերջինիս պարզել դեպքի մանրամասներն անձամբ Կիրանց գյուղի գյուղապետից, համապատասխան ֆինանսական աջակցություն ցուցաբերելու նպատակով:

Ավալյանների ընտանիքին, հրդեհի հետեւանքով հասցված նյութական տույժը, ըստ գյուղապետ Համայակ Նազարյանի նախնական հաշվարկների, կազմեց 4 մլն դրամ:

Մարտի 23-ին Վլադիմիր Աղայանն անձամբ մեկնեց Տավուշի մարզ, մարզպետ Արմեն Ղուլարյանի հետ այցելեց Կիրանց գյուղ` 4 մլն դրամն Ավալյաններին հանձնելու:

# Հակադարձեցին

## Հուշարձանագետը անարգում է երջանկահիշատակ կաթողիկոսների հիշատակը

Օրերս համացանցում հուշարձանագետ Սամվել Կարապետյանը տարածեց տեսաձայնագրություններ, որոնցում իր «հիշողություններն է» կիսում երջանկահիշատակ Վազգեն Ա եւ Գարեգին Ա Ամենայն հայոց կաթողիկոսների հետ ունեցած հանդիպումների մասին եւ քննադատում լուսահոգի հայրապետներին:

Այն, որ պարոն Կարապետյանը չի թաքցնում իր անհանդուրժողականությունը եւ չարախոսում ու զրպարտում է ներկայիս կաթողիկոսին եւ ընդհանրապես եկեղեցականներին, շատերին է հայտնի, սակայն, երբ խոսքը վախճանյալ կաթողիկոսների մասին է, համաձայնեք, որ սա արդեն անարգանք է ննջեցյալների հիշատակի հանդեպ, իսկ ներկայացված անհեթեթ հիշողությունները ոչ այլ ինչ են, եթե ոչ խելացնոր բարբաջանքներ:

Մեր հասարակության մեջ յուրաքանչյուր քիչ թե շատ կրթված եւ դաստիարակված մարդ տիրապետում է տարրական քաղաքավարությանը եւ գիտի, որ ննջեցյալի հետեւից խոսելը անազնիվ է եւ անպարկեշտ, իսկ տղամարդու պարագայում՝ նաեւ ոչ տղամարդավայել:

Որքան զարմանալի եւ անհասկանալի է պարոն Կարապետյանի կողմից երջանկահիշատակ հայրապետների հիշատակի անարգումը եւ ինքն իրեն վարկաբեկող դրսեւորումը, նույնքան անլուրջ եւ անհեթեթ է նրա «հիշողությունների» բովանդակությունը:

Լուսահոգի Վազգեն Ա կաթողիկոսը մեր ժողովրդի կողմից սիրված եւ հարգված հայրապետներից մեկն է եղել, ում բաժին է ընկել դժվարին մի ժամանակաշրջանում առաջնորդել Հայ եկեղեցին եւ ժողովրդին: Իբրեւ Հայոց հայրապետ՝ մտահոգվել է իր հոտի ճակատագրով եւ երբեք անտարբեր չի եղել, առավել եւս իր շրջանի եկեղեցականների մեջ չի սերմանել անտարբերություն սեփական ժողովրդի հանդեպ, այլ ընդհակառակը, թեկուզ եւ նման պայմաններում, երբ եկեղեցին սահմանափակված էր իրագործելու իր առաքելությունը, Վազգեն կաթողիկոսը արեց անկարելին՝ Հայ եկեղեցին պահելու եւ հավատքը հայորդիների սրտում տարածելու սրբազան գործում, որի համար էլ արժանացավ հայ ժողովրդի սիրուն եւ հարգանքին:

Բազմաթիվներից բերենք ընդամենը երկու փաստարկ՝ իրազեկելու հուշարձանագետին, որ երջանկահիշատակ հայրապետը տեղեկացված էր Արցախում գտնվող հայկական սրբավայրերի մասին եւ մտահոգ էր դրանց ճակատագրով:

Դեռեւս 1955 թվականին, երբ տակավին պարոն Կարապետյանը չէր ծնվել, Վազգեն Ա կաթողիկոսը նամակ է հղել ԽՍՀՄ կառավարության ղեկավար Նիկոլայ Բուլգանինին՝ խնդրանքով, որ Սուրբ Էջմիածնի ենթակայությանը փոխանցվեն մի շարք եկեղեցիներ, որոնց թվում նաեւ Գանձասարի վանքը:

Իսկ 1957 թ. Վազգեն Ա կաթողիկոսը այցելում է Բաքու եւ Ղարաբաղ, որը լինում է Վեհափառի առաջին եւ դժբախտաբար վերջին այցը Արցախ: Սեպտեմբերի 25-ին Վազգեն Ա հայրապետը իր շքախմբով հատում է Ղարաբաղի սահմանը եւ հանգրվանում Ստեփանակերտում, այցելում Շուշի, Գանձասար եւ Ամարաս: Մասնավորապես Ամարասի վանքում Վեհափառը ցավով ականատես է լինում վանքի անմխիթար վիճակին, որը վերածվել էր անասնագոմի: Այս մասին, մեկ տարի անց, Հայ եկեղեցու գործերի նախագահին հղած իր բողոքագրում նշում է Վեհափառ հայրապետը: Ստեփանակերտում Վեհափառ հայրապետը հայկական եկեղեցիների մի ցանկ է ներկայացնում ադրբեջանական իշխանություններին՝ խնդրանքով, որ Գանձասարը, Ամարասը, Ստեփանակերտի աղոթատունը, Կիրովաբադի շրջանում գտնվող Չոլակ կոչվող ուխտավայրը, Նուխի, Ջաքաթալա եւ Նախիջեւանի եկեղեցիները վերադարձվեն Հայ եկեղեցու տնօրինմանը:

Այս փաստերը վկայում են, որ Վազգեն Վեհափառը, դեռ մինչեւ պարոն Կարապետյանի լույս աշխարհ գալը, շատ լավ տիրապետում էր Արցախում գտնվող հայկական սրբավայրերի մասին տեղեկությանը, հետեւաբար պարոն Կարապետյանից չէ, որ Ամենայն հայոց կաթողիկոսը պետք է տեղեկանար այդ հուշարձանների մասին:

Ինչ վերաբերում է Գարեգին Ա կաթողիկոսի Արցախ այցելության եւ մանուկների օրհնության հետ կապված պարոն Կարապետյանի «պայծառ հիշողությանը», ապա նշենք, որ ամեն բարեպաշտ առիթով, այդ անգամ եւս, Հայոց հայրապետը մանուկներին էր բաշխել Սուրբ Էջմիածնի օրհնությունը: Ըստ երեւույթին պարոն Կարապետյանի համար ոչ շոշափելի ու աննյութական արժեքները ընկալելի չեն:

Յուրաքանչյուր հայորդի, ով առիթ է ունեցել ի մոտո շփվելու մեծանուն հայրապետի հետ, կարող է վկայել, որ Գարեգին Ա կաթողիկոսը հումորի զգացում ունեցող եւ անմիջական եկեղեցական էր ու հաճախ էր կատակում: Հետեւաբար պարոն Կարապետյանի ներկայացրած ծխախոտի հետ կապված «արժեքավոր հիշողությունը» պարզապես կատակ է եղել: Թերեւս տեղին է պարոն Կարապետյանին հիշեցնել նշանավոր մտածողի խոսքերը. «Խելացի դեմքը դեռեւս խելքի նշան չէ: Աշխարհի բոլոր հիմարությունները արվել են դեմքի հենց այդ արտահայտությամբ: Ժպտացեք, պարոնայք»:

Պարզապես անհասկանալի է, թե ո՞րն է պարոն Կարապետյանի նպատակը, ի վերջո նրա այդ «հիշողությունները» ի՞նչ շահ են բերելու հասարակությանը: Դժբախտաբար հասարակական մեր կյանքում մեծ տեղ են գտնում բամբասանքները եւ չարախոսությունները, որոնք փորձում են արդարացվել առողջ քննադատության հիմնավորումով: Հավանաբար պրն Կարապետյանը մտածում է, որ մեկ ավելի մեկ պակաս բամբասանքը չի խանգարի: Հավանաբար նաեւ հուշարձանագետը անդրադարձել է ներկայիս կաթողիկոսի հասցեին տարածած իր ստահոդ լուրերին, թե իբր կաթողիկոսին չի հետաքրքրում սարերում գտնվող սրբավայրերի ճակատագիրը: Տեսնելով, որ վերջին շրջանին նորոգվում են նաեւ լեռների վրայի խոնարհված սրբավայրերը, նա հասկացել է, որ զրպարտել է Հայոց կաթողիկոսին, եւ այս անգամ, առանց խղճի խայթի, որոշել է քննադատության թիրախ դարձնել վախճանյալ կաթողիկոսներին:

Ափսոս, որ երջանկահիշատակ հայրապետները պարոն Կարապետյանին ընդհանրապես ընդունելության են արժանացրել, հակառակ պարագայում այսօր նա անամոթաբար Հայոց հայրապետների մահից տարիներ անց՝ խեղաթյուրելով իրողությունները, չէր փորձի հասարակության մեջ տարակուսանք սերմանել լուսահոգի հայրապետների հանդեպ:

Մնում է սպասել պարոն Կարապետյանի հիշողության հերթական փայլատակմանը եւ տեսնել, թե հաջորդ անգամ ինչ անհեթեթ եւ ստապատում հիշողություններ կներկայացնի հանրությանը:

**ՊԱՐԹԵՎ արքեպս ԲԱՐՍԵՂՅԱՆ**
**Միաբան Մայր աթոռ**
**Սուրբ Էջմիածնի**

## Եկեղեցին հուշարձան չէ

Խորհրդային երկիրն իրոք ձեռքբերումներ ուներ, մարդիկ ապահովված էին աշխատանքով, բնակարաններով եւ ապրելու համար անհրաժեշտ գրեթե ամեն բանով: Չկային նաեւ գերհարուստներ ու վզերը ծռած չքավորներ, ոչ էլ՝ մերժված մտավորականներ, բայց կար մի կարեւոր գործոն, որի բացասական հետեւանքները բավական մտահոգիչ են ներկա մեր իրականության մեջ: Տասնամյակների անաստվածության պարտադրման հետեւանքով եւ նախկինում տարվող հավասարության եւ ազնվության քարոզչության բացակայության պայմաններում այսօր շատերի համար գործարարությունը հասկացվում է որպես հարստանալու ամենաթողություն, պաշտոն զբաղեցնելը՝ գործարարություն, հայրենիքը՝ որպես բնակավայր, իսկ Հայ եկեղեցին էլ՝ իբրեւ սոսկ հուշարձան:

Թերեւս աթեիստական մտածողություն է կրում նաեւ բոլորիս ծանոթ հուշարձանագետը, ում՝ դրսի մեր եկեղեցիների պահպանմանն ուղղված նախկին ելույթներն այսօր արդեն փոխարինվել են միեւնույն եկեղեցու դեմ բացահայտ հակակրանքի դրսեւորումներով: Հանդես գալով իր տեսաբլոգային մենախոսություններով՝ նա փորձում է հարցականի տակ դնել, մերժել մեր ժողովրդի քրիստոնեական ամբողջ անցյալն ու առհասարակ Հայ առաքելական եկեղեցին: Սակայն, այս դաշտում պարարտ հող չգտնելով, բայց հետապնդելով միեւնույն նպատակը, այժմ էլ քննադատության թիրախ է դարձրել մեր եկեղեցու նվիրապետությունը: Մտահոգ արտահայտություն տալով դեմքին եւ զարկ տալով սեփական երեւակայությանը, նա ջանում է մեկը մյուսի հետեւից վարկաբեկել ինչպես կաթողիկոսական զույգ աթոռների ներկա գահակալներին, այնպես էլ Վազգեն Առաջին եւ Գարեգին Առաջին լուսահոգի հայրապետներին: Ու եթե չլիներ ժամանակային սահմանափակման անառարկելի հանգամանքը, կասկածից վեր է, որ նա շատ ավելի հեռուն պիտի գնար, որ հասներ... ընդհուպ Լուսավորչին: Ավելորդ համարելով անդրադառնալ իր ելույթների նյութին, որն ըստ էության բացակայում է, կամ հորինված, առավել մտահոգիչ է որոշ լրատվամիջոցների պոզիտիվ անդրադարձն ազգային արժանապատվությանը դիպչող այս ելույթների նկատմամբ:

Նորություն չէ, որ մեր եկեղեցին ու հայությունը միմյանցից անբաժան են, անտրոհելի, եւ անհնար է պատկերացնել հայ ժողովրդին՝ չհիշելով եկեղեցու ծոցում ստեղծված մեսրոպատառ այբուբենը, այնտեղ գրված առաջին պատմագրքերը, ձեռագիր Աստվածաշունչ հրաշագեղ մասյանները, խաչքարերը, քրիստոնեության տարածման գործում համաշխարհային անուրանալի ավանդը, երկրագնդի վրա ամենուրեք դեպի երկինք խոյացող հին ու նոր մեր բյուրավոր եկեղեցիները ... Իսկ փորձել հրաժարվել հայոց դարավոր եկեղեցուց, կնշանակեր ժխտել սեփական պատմությունը, քրիստոնեությամբ ներծծված մշակույթն ու անցյալը, խեղել ազգային դիմագիծը, զրկել աշխարհասփյուռ հայությանը ազգային ինքնության պահպանման գլխավոր հենարանից, ջլատել ազգին ու ջուր լցնել թշնամու ջրաղացին:

Եվ մտաբերելով հուշարձանագետի դեմքը՝ սկսում ես ակամա մտածել. արդյոք նա իրոք շահագրգռված է մեր եկեղեցիների՝ միայն անկենդան հուշարձանների տեսքով հայտնվելու կործանարար հեռանկարով, թե՞ եկեղեցին քննադատելու պոպուլիստական, ամենահեշտ, ամենեւին համարձակություն չպահանջող մեթոդն է պատճառն իր այս վարքագծի: Գուցե հայրենի ուսումնական հաստատություններում նման «մասնագիտական կրթության» անհնարինությամբ պայմանավորված ինչ-որ օտար մի երկրում անցած «հուշարձանագիտական վերապատրաստման» մեթոդաբանությո՞ւնն է թելադրում ընթանալ նման ուղիով...

Հայոց կենդանի եկեղեցին հուշարձան համարողների կամ այն հուշարձան դարձնելու փորձ կատարողների կապակցությամբ տեղին է հիշել երջանկահիշատակ Գարեգին Ա Ամենայն հայոց կաթողիկոսի սույն քարոզախոսությունը. «Կ՛երգեն մեր շարականները. «փրկէ մեզ տեսանելի եւ ոչ տեսանելի թշնամիէն»: Ի՞նչ ըսել կ՛ուզէ:

Տեսանելի թշնամին աչքովդ կը տեսնես, ինքզինքդ կը պաշտպանես եւ կրնաս խուսափիլ այն չարիքէն, որ դուրսի թշնամին քեզի կրնայ պատճառել: Երբ որ կը տեսնես, ըստ այնմ կեանքդ կը դասաւորես եւ կրնաս խուսափիլ:

Ի՞նչն է աներեւոյթ թշնամին, եւ շատ խորունկ խօսք է: Այն թշնամին, որ մեր մէջէն կը գործէ, այն թշնամին, որ մեզ՝ մեր քրիստոնէական հաւատքին մէջ կը տկարացնէ, այդ թշնամի՛ն է, որ ամէնէն վտանգաւորն է, որովհետեւ այդ թշնամին կը նմանի ծառին մէջէն գործող որդին, որ կ՛ուտէ աւիշը, կը չորցնէ ծառը»:

**ԱՇՈՏ ՎԱՎՅԱՆ**

ՆԵՐՀԱՅԿԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՈՒՄ

## Ինչպե՞ս են ինտեգրվում սիրիահայերը հայաստանյան իրականությանը

*3-րդ էջից*

**Փախստականներից շատերը անընդհատ հիշեցնում էին, որ իրենք ապրել են Բաքվի կենտրոնում եւ նույնն էլ ցանկանում են ունենալ Երեւանում: Այս եւ բազմաթիվ այլ գործոններն էլ խանգարեցին ներգաղթած հայերին ինտեգրվել հայաստանյան հասարակությանը, իսկ վերջինիս էլ՝ դրական տրամադրվել նրանց նկատմամբ: Շատ երկար ժամանակ՝ 20-25 տարի եւ սերունդների փոփոխություն պահանջվեցին, որ այդ հոգեբանական պատնեշը խախտվի եւ ադրբեջանահայերի արդեն հայրենիքում ծնված սերունդը իրեն զգա ինչպես իր հայրենիքում:**

**Իսկ ինչպե՞ս են իրենց զգում սիրիահայերը Հայաստանում եւ կարողանո՞ւմ են ինտեգրվել հայաստանյան հասարակության մեջ: Լրատվամիջոցներում, այդ թվում նաեւ մեր թերթում եղել են հարցազրույցներ նրանց հետ, անդրադարձել խնդիրներին եւ դժվարություններին: Իհարկե, ինտեգրվելու հարցում եւս սիրիահայերը դժվարությունների են հանդիպում: Նրանք չեն հասկանում, թե ինչո՞ւ են իրենցից ավելի շատ գումար պահանջում բնակարան վարձով տվողները, տաքսու վարորդները կամ առեւտրականները: Նրանք չեն կարողանում կողմնորոշվել, թե որտե՞ղ են իրենց խաբելու եւ ինչպե՞ս դրանից զգուշանան: Այս ամենը շատ ցավալի է: Ցավալի է ոչ միայն սիրիահայերի, այլեւ բոլորիս համար: Սիրիայի մեր հայրենակիցներին խաբողները ամեն քայլափոխի, գուցե պակաս հաջողությամբ, խաբում եւ «գցում» են նաեւ մեզ բոլորիս: Եվ սա մեր իրականության ամենացավալի փաստերից է: Սակայն, ի պատիվ սիրիահայերի, նրանց գերակշիռ մասը երբեք այնպես չարտահայտվեց Հայաստանի նկատմամբ, ինչպես 90-ականներին ադրբեջանահայերը: Դրա համար էլ նրանց դժգոհությունները չդարձան տեղի բնակչության հետ հակադրության պատճառ: Սակայն ամենակարեւորը, որ ցանկանում ենք ընդգծել, սիրիահայերի ընդգծված աշխատասիրությունն է եւ նորը ստեղծելու ձգտումը:**

**Զանգվածային լրատվամիջոցներից գիտենք դեղագործական լաբորատորիա, ֆերմերային տնտեսություններ Արցախում, առեւտրային եւ սպասարկման ոլորտի փոքր օբյեկտներ ստեղծած սիրիահայերի կողմից: Մեր շրջապատից էլ գիտենք աշխատանքի տեղավորված սիրիահայերի պարտաճանաչ եւ բարեխիղճ աշխատանքի, իսկ աշխատանք եւ մեծ գումարներ չունեցողների դեպքում՝ տնայնագործական գործունեության շատ դեպքերի մասին: Վարսահարդարում, դիմահարդարում, քաղցրավենիքների եւ այլ ուտեստեղենի պատրաստում, հագուստների ձեւավորում եւ կարուձեւ՝ սրանք այն ոչ բոլոր գործունեության տեսակներն են, որոնցով, տանը նստելու եւ դժգոհելու փոխարեն, զբաղվում են Հայաստանում դեռեւս մի քանի ամիս գտնվող սիրիահայերը: Ընդ որում, նրանցից շատերը դա անում են վարձով բնակարաններում ապրելով: Սրանով նրանք շահեկանորեն առանձնանում են ոչ միայն Ադրբեջանից եկած փախստականներից, այլեւ մշտապես կյանքից դժգոհող տեղաբնակներից շատերից: Ինչը հույս է տալիս, որ սիրիահայերը արագորեն կինտեգրվեն հայաստանյան իրականությանը եւ կդառնան մեր երկրի լիարժեք եւ ամենակարեւորը՝ նյութական արժեքներ ստեղծող եւ տնտեսական աշխուժություն բերող քաղաքացիներ: Պետությանն ու հասարակությանը մնում է ամեն կերպ նպաստել այդ գործընթացին, որից մենք բոլորս միայն կշահենք:**

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

Մարտի 21-ին նշել էինք, որ ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի այցի ընթացքում Իսրայելի ղեկավարների՝ մասնավորապես վարչապետ Բենիամին Նաթանյահուի հետ հավանաբար կքննարկի թուրք-իսրայելական հարաբերությունների կարգավորման խնդիրը, անդրադառնալով միաժամանակ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի մարտի 1-ի հայտարարությանը, որտեղ վերջինը Վիեննայում իսկ ներողությունը խնդրել «Մավի Մարմարայի» տախտակամածում հատուկջոկատայինների թույլ տված սխալների համար: Դա հանգեցրել էր Իսրայելում Թուրքիայի դեսպանի հետկանչին եւ թուրք-իսրայելական դիվանագիտական հարաբերությունները իջեցվել էին ամենացածր մակարդակի:

2011-ին Ժնեւում Իսրայելի վարչապետի լիազոր ներկայացուցիչ Յոսի Չեյհանովերը հանդիպել Թուրքիայի վարչապետ Էրդողանի հետ: Որոշվել է նորմալացնել երկու երկրների հարաբերությունները, որի շրջանակում դեսպանների գործունեությունը նշանակման վայրերում վերականգնվում եւ չեղյալ է հայտարարվում իսրայելական զինծառայողների դեմ թուրքական դատարանի կայացրած վճիռը»:

Ի դեպ, չեղյալ հայտարարելը վեր է Թուրքիայում ինչպես վարչապետի, այնպես էլ նախագահի

# Ոչ թե Իսրայելն է ներողություն խնդրել Թուրքիայից, այլ՝ վարչապետ Նաթանյահուն թուրք ժողովրդից

## *Ընդ որում՝ առանց բավարարելու վարչապետ Էրդողանի գեթ մեկ պահանջ*

սիոնիզմը նույնացրել էր ֆաշիզմի հետ, համարելով դա մարդկության դեմ հանցագործություն:

Հարաբերությունների հարցը քննարկվել է, որ մարտի 22-ին Նաթանյահուն հեռաձայնել է Էրդողանին: Հատկանշական է, որ Նաթանյահու-Էրդողան հեռախոսազրույցի մասին հաղորդագրությամբ աշխարհին իրազեկել է Բարաք Օբաման, առանց սպասելու կողմերի պաշտոնական հայտարարություններին եւ դրա առթիվ իր գոհունակությունն է հայտնել:

Թուրքական էլեկտրոնային եւ տպագիր մամուլը հեռախոսազրույցը ներկայացրել էր «Իսրայելը ներողություն խնդրեց» վերնագրով, իսկ թուրքական կառավարությունը՝ որպես «Իսրայելի նկատմամբ դիվանագիտական հաղթանակ, որի արդյունքում իսրայելական կողմը բավարարել է Թուրքիայի բոլոր 3 պահանջները»:

Ներողություն խնդրելու եւ Թուրքիայի պահանջները բավարարելու պարագայում խոսքը վերաբերում է «Մավի Մարմարա» նավի միջադեպին: Ինչպես հայտնի է, 2010-ին Գազայի հատված մարդասիրական օգնություն տանող այս նավի տախտակամածում իսրայելական հատուկ ջոկատը հումանիստների կատաղությունը զսպելու նկատառումով կրակ էր բացել՝ սպանելով 9 թուրքի: Միջադեպից հետո թուրքական կողմը Իսրայելին մեկ ամիս ժամանակ էր տրամադրել Թուրքիայից պաշտոնապես ներողություն խնդրելու եւ պաշտոնական փոխհատուցում վճարելու համար:

Իսրայելը պատրաստակամություն էր հայտնել փոխհատուցումը վճարել ոչ թե Թուրքիային, այլ սպանվածների ընտանիքներին, դիմել էր Իսրայելում Թուրքիայի նախկին դեսպան, արտգործնախարարության խորհրդական Ֆերիդուն Սինիրլիօղլուի հետ: Թեեւ կողմերը եկել էին ընդհանուր հայտարարի, նույնիսկ նրանց հաջողվել էր պատրաստել ստորագրության պատրաստ համաձայնագրի տեքստ, սակայն Էրդողանը փոխհատուցման գինն էր բարձրացրել եւ միաժամանակ պահանջել, որ Իսրայելը վերացնի Գազայի հատվածի շրջափակումը:

Այսպիսով, թուրք-իսրայելական հարաբերությունները վերադարձել էին ելման կետ: Ավելին, Թուրքիան նավում 9 թուրքի սպանության առնչությամբ քրեական գործ հարուցելով Իսրայելի պետության եւ իսրայելական բանակի զորահրամանատարների դեմ, ինչպես odatv.com-ը նշել է երեկ, ոչ ավելի, ոչ պակաս, 18 հազար տարվա ազատազրկման էր դատապարտել վերջիններիս:

Այլ կերպ, Իսրայելի հետ հարաբերությունները թեկուզ խեղկատակության միջոցով հետեւողականորեն սրող կողմը Թուրքիան էր: Պարզապես ԱՄՆ նախագահի Իսրայել այցելության նախօրյակին վարչապետ Էրդողանը հայտարարել էր, որ մարտի 1-ին Վիեննայում սիոնիզմը ֆաշիզմի հետ նույնացնելու տեսքով ներկայացված իր հայտարարությունը սխալ են հասկացել:

Իսրայելի եւ Թուրքիայի վարչապետների հեռախոսազրույցի բովանդակությունը, ինչ խոսք, չգիտենք: Պարզապես կարող ենք ծանոթանալ հեռախոսազրույցի մասին կողմերի հայտարարություններին: Օրինակ, Իսրայելի վարչապետի պաշտոնական կայքէջում տեղադրված հայտարարությունը սկսում է հետեւյալ տողերով. «Այսօր Բենիամին Նաթանյահուն հեռախոսազրույց է ունեցել Թուրքիայի վարչապետ Էրդողանի հետ: Որոշվել է նորմալացնել...

իրավասություններից: Ինչ վերաբերում է «ներողությանը», ապա իսրայելական կողմի հայտարարության տեքստում Իսրայելը ցավ է հայտնում, որ «Մավի Մարմարայի» տախտակամածում տեղ են գտել մարդկային կորուստներ, իսկ վարչապետ Նաթանյահուն ներողություն է խնդրում թուրք ժողովրդից ռազմական գործողության ընթացքում թույլ տված այն սխալների համար, որոնք մարդկային կորուստների պատճառ են դարձել: Իսրայելական կողմը լիարժեք ստանձնում է զոհվածների համար փոխհատուցում վճարելու պարտավորությունը եւ Պաղեստինի շրջաններում հումանիստ իրավիճակի բարելավման համար թուրքական կողմի հետ համատեղ ջանքեր գործադրելու պատրաստակամություն է հայտնում:

Ներողության իսրայելական տեքստում Գազայի հատվածն առհասարակ չի հիշատակվում, էլ չեմ խոսում շրջափակման վերացման մասին: Ընդհակառակը, շրջափակումը մնում է ուժի մեջ: Թուրքական տեքստում էլ բացակայում է դատավճիռը չեղյալ հայտարարելու որոշումը եւ նշվում. «Վարչապետ Նաթանյահուն «Մավի Մարմարայի» տախտակամածում թույլ տված սխալներից բխող մարդկային կորուստների առնչությամբ Իսրայելի անունից ներողություն է խնդրել թուրք ժողովրդից, իսկ մեծարգո վարչապետ Էրդողանը ընդունել է ներողությունը»:

Հիրավի: Պարզապես վարչապետ Նաթանյահուն չի բավարարել Թուրքիայի գեթ մեկ պահանջը, որքան էլ վարչապետ Էրդողանը հայտարարի. «Իսրայելին ծնկի ենք բերել, պահանջել ենք պարտաքների ազատ մուտքը Գազայի հատված»:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

ԵՄ-Ը 10 ՄԼՐԴ ԵՎՐՈ Է ՏԱԼՈՒ

# Կիպրոսը փրկվեց սնանկացումից

## *Դա թանկ կնստի հարուստների եւ ռուսների վրա*



**Կիպրոսի ներկայացուցիչները եւ կղզու գլխավոր վարկատուները երեկ գիշեր 14 ժամ տեւած բանակցություններից հետո վաղ առավոտյան վերջապես հասել են համաձայնության: RFI ռադիոկայանը հաղորդում է, որ կղզին կփրկվի սնանկացումից, բայց ստիպված կլինի փակել իր երկրորդ բանկը՝ «Լայկին», իսկ խոշորագույն բանկային հաստատությունում՝ Cyprus Bank-ում ամենամեծ ավանդատուները կունենան մոտ 30-40 տոկոսի հասնող կորուստներ:**

**Եվրոգոտու երկրների ֆինանսների նախարարների միջեւ ձեռք բերված համաձայնությունը կարող է շատ թանկ նստել ամենախոշոր ավանդատուների (մասնավոր անձանց եւ ձեռնարկությունների), ինչպես նաեւ կղզում կեցության իրավունք չունեցողների, մասնավորապես ռուս նորահարուստների վրա: «Լայկի» բանկը անմիջապես պետք է լուծարվի, եւ նրանք կարող են կորցնել այդ հաստատությունում 100 հազար եվրոյից մեծ բոլոր ավանդները, քանզի Եվրոմիության օրենսդրությամբ երաշխավորված առավելագույն սահմանը 100 հազարն է:**

**Վերջին տեղեկությունների համաձայն, վարկատուների «եռյակը» (Եվրոմիություն, ԵՄ Կենտրոնական բանկ, ԱՄՀ) որոշել է Կիպրոսին հատկացնել 10 մլրդ եվրո: Փոխարենը պահանջվում է վերակազմավորել «Լայկի» բանկը: Մինչեւ 100 հազար եվրո ավանդներ ունեցողները զերծ կմնան ավելի վաղ Եվրոմիության առաջարկած 6,75-9,9 % միանվագ հարկումից. նրանց ավանդները կտեղափոխվեն Bank of Cyprus: Մինչդեռ 100 հազար եվրոյից բարձր ավանդները կենթարկվեն զգալի հարկման: Վերջինիս տոկոսադրույքը չի հրապարակվում, բայց ենթադրվում է, որ լինելու է առնվազն 20 տոկոս: «Լայկի» բանկի վերակազմավորման մեջ իրենց ավանդը կմուծեն նաեւ բանկի բաժնետերերը, մյուս արժեթղթերի սեփականատերերը: Այս ամենը կղզու իշխանություններին հնարավորություն կտա հայթայթել 4,2 մլրդ եվրո հավելյալ գումար:**

**Միեւնույն ժամանակ երկրի Կենտրոնական բանկը սահմանափակել է Bank of Cyprus-ից եւ «Լայկիից» դրամ ստանալու հնարավորությունները: Ավանդատուները բանկոմատների միջոցով կարող են ստանալ օրական մինչեւ 100 եվրո:**

# Մուշարաֆը վերադարձել է Պակիստան

**Պակիստանի նախկին նախագահ Փերվեզ Մուշարաֆը չորսամյա հարկադիր տարագրությունից հետո կիրակի օրը վերադարձել է հայրենիք: Նա 1999-ին նախագահ էր դարձել զինվորական հեղաշրջման շնորհիվ, իսկ 2008-ին հեղաշրջման հետեւանքով թողել էր պաշտոնը:**

**«Նյու Յորք թայմս» թերթը հաղորդում է, որ նախկին նախագահը մայիսին կայանալիք խորհրդարանական ընտրություններում գլխավորելու է քաղաքական կուսակցություններից մեկը:**

**«Թալիբան» շարժման գրոհայինները հայտարարել են, որ Մուշարաֆին մահապատժի կենթարկեն ըստ այն դատավճռի, որ իրենք նրա նկատմամբ 2001-ին կայացրել էին ԱՄՆ-ի հետ համագործակցելու մեղադրանքով:**

**Կարաչիի օդանավակայանում Մուշարաֆը հայտարարել է, որ ինքը պատրաստ է սեփական կյանքը «վտանգի ենթարկել հանուն Պակիստանի փրկության»:**

**Պակիստանում Մուշարաֆի նկատմամբ հարուցված է մի քանի քրեական գործ: 2012-ին կաշառակերության գործով նա սեփականազրկվեց: Նա մեղադրվում է նաեւ 2007-ի դեկտեմբերին ընդդիմության առաջնորդ Բենազիր Բհուտտոյի սպանությանը մեղսակից լինելու մեջ:**

# Ինքնակոչ նախագահ Կենտրոնաֆրիկյան Հանրապետությունում

**Կենտրոնաֆրիկյան Հանրապետության իշխանությունների դեմ մարտնչող «Սելեկա» ապստամբական խմբավորման գրոհայինները կիրակի երեկոյան մայրաքաղաք Բանգիում ներխուժել են նախագահական պալատ եւ գրավել այն: Խմբավորման առաջնորդ Միշել Ջոտոդիան իրեն հռչակել է երկրի նոր նախագահ եւ հայտարարել է, որ ինքը գործում է հունվարին իշխանությունների եւ ընդդիմության միջեւ ձեռք բերված զինադադարի համաձայնության շրջանակներում:**

**Ֆրանսպրես գործակալությունը հաղորդում է, որ օրինական նախագահ Ֆրանսուա Բոզիզեն փախել է հարեւան երկիր՝ Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն: Սինհուա գործակալությունը մարտի 25-ին Կամերունի պաշտպանության նախարարության ներկայացուցչին վկայակոչելով հաղորդեց, որ Բոզիզեն իր երկու որդիների հետ Կոնգոյից թռել է Կամերունի Բատուրի քաղաք:**



**Ջոտոդիան հայտարարել է, թե «Սելեկայի» գրոհայինները գործում են Բանգիի իշխանությունների եւ ընդդիմության հունվարյան համաձայնագրի շրջանակներում: RFI ռադիոկայանը նշում է, որ այդ փաստաթղթի համաձայն նախագահ Ֆրանսուա Բոզիզեն մնում էր իր պաշտոնում, սակայն վարչապետի պաշտոնում նշանակվում էր ընդդիմության ներկայացուցիչ Նիկոլաս Տյանգայեն:**

**«Սելեկայի» առաջնորդի խոսքերով, Տյանգայեն կպահպանի իր պաշտոնը, իսկ «ազատ եւ թափանցիկ» ընտրությունները կանցկացվեն առաջիկա երեք տարվա ընթացքում՝ ըստ ձեռք բերված համաձայնության:**

**Ինքնակոչ նախագահը նաեւ ընդգծել է, որ «դուռը բաց է» նաեւ Բոզիզեի կառավարության նախարարների առջեւ, որոնց հետ հնարավոր է համագործակցություն:**

**ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունը հանդես է եկել Կենտրոնաֆրիկյան Հանրապետությունում «կարգուկանոնը վերականգնելու» կոչով:**

**1960 թվականին Ֆրանսիայից անկախացած այդ երկրում քանիցս պետական հեղաշրջումներ են տեղի ունեցել: Վերջին դեպքերի կապակցությամբ Ֆրանսիան որոշել է այնտեղ զգալիորեն ամրապնդել իր ռազմական ներկայությունը: Գաբոնից 350 ֆրանսիացի զինծառայող շտապ կարգով տեղափոխվել է Բանգի: Այսպիսով, Կենտրոնաֆրիկյան Հանրապետությունում Ֆրանսիան արդեն ունի 600 զինծառայող: Հաղորդվում է, որ նրանք վերահսկում են մայրաքաղաքի օդանավակայանը եւ ապահովում են Ֆրանսիայի դեսպանության աշխատակիցների անվտանգությունը:**

**Կենտրոնաֆրիկյան Հանրապետությունում ապրում են 1250 ֆրանսահպատակներ, որոնցից շատերն ունեն երկքաղաքացիություն: Փարիզի իշխանությունները ընդգծում են, որ Ֆրանսիան մտադիր չէ Կենտրոնաֆրիկյան Հանրապետությունում պաշտպանել կողմերից որեւէ մեկին:**

# ՀՀ մշակույթի նախարարը հանդիպեց վիրահայոց ներկայացուցիչների հետ

Աշխատանքային այցով Թբիլիսիում գտնվող ՀՀ մշակույթի նախարար տիկին Հասմիկ Պողոսյանը, մարտի 22-ին Հայ եկեղեցու Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնում հանդիպեց Վրաստանի հայ համայնքի ներկայացուցիչների հետ: Հանդիպմանը ներկա էր նաեւ ՀՀ գրողների միության նախագահ Լեւոն Անանյանը:




Վրաստանում ՀՀ դեսպան պարոն Հովհաննես Մանուկյանը հավաքվածներին ներկայացրեց ՀՀ մշակույթի նախարարի եռօրյա աշխատանքային այցի մանրամասները, արժեւորելով երկրի վարչապետ Բիձինա Իվանիշվիլու, Համայն Վրաստանի կաթողիկոս-պատրիարք Իլիա Երկրորդի եւ այլ կառույցների ղեկավարների հետ նրա հանդիպումները եւ քննարկումները:

Նախարար Հասմիկ Պողոսյանն իր խոսքում կարեւորեց մշակույթի բոլոր ոլորտներում համագործակցության երկուստեք մեծ ցանկությունը, ընդգծելով դեռեւս հունվար ամսին Երեւանում երկու երկրների՝ Վրաստանի եւ Հայաստանի մշակույթի նախարարությունների միջեւ ստորագրված համագործակցության եռամյա ծրագիրը, որը վերաբերելու է բոլոր բնագավառներին, ընդհուպ հայկական եկեղեցիների վերականգնման աշխատանքները: Տիկին նախարարը խոսեց նաեւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանավորությամբ Սայաթ-Նովայի 300-ամյակի կապակցությամբ օգոստոս ամսին Հաղպատում կայանալիք աշուղական երգի փառատոնի մասին, կարեւորելով վրացիների, ինչպես նաեւ այլազգի ներկայացուցիչների մասնակցությունը:

Այնուհետեւ նախարարը պատասխանեց ներկաներին հետաքրքրող տարբեր հարցերի, որոնք նաեւ հետագա աշխատանքների կանխագծումներ էին:

Ամփոփելով հանդիպումը, Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը պատմեց «Հայարտուն» մշակույթի կենտրոնում ծավալված ազգանվեր գործունեության, Վրաստանում ՀՀ դեսպանության հետ համատեղ անցկացրած բազմաթիվ միջոցառումների մասին:

Սրբազան Հայրը երախտիքի խոսքեր ուղղեց ՀՀ մշակույթի նախարարությանը, հանձին տիկին Հասմիկ Պողոսյանի՝ «Հայարտան» գործունեությանը օժանդակելու համար:

Նախարար Պողոսյանը Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնին նվիրեց նկարիչ Արարատ Սարգսյանի «Ջուղայի խաչքարեր» կտավը: ՀՀ մշակույթի նախարարին իրենց աշխատանքները նվիրեցին թբիլիսահայ քանդակագործ Լեւոն Օսիպովը եւ նկարիչ Թենգիզ Միկոյանցը:

Ի պատիվ մայր հայրենիքից ժամանած հյուրերի, «Հայարտուն» մշակույթի կենտրոնի ուժերով տրվեց փոքր համերգ:

# «Ռեժիսորներ առանց սահմանների» նախագիծը հանդես է գալիս նորությամբ

«Ռեժիսորներ առանց սահմանների» (ՌԱՍ) նախագիծը Երեւանում մայիսի 6-10 խաղարկային ֆիլմերի սցենարի զարգացման դասընթացներ կանցկացնի: Դասընթացն ուղղված կլինի սցենարի զարգացման ստեղծագործական մոտեցումներին, սցենարի զարգացման հիմնարար հմտություններ կհաղորդի նորահայտ սցենարիստներին, պրոդյուսերներին եւ ռեժիսորներին հետաքրքրական սցենարներ ստեղծելու եւ համաշխարհային կինոշուկայում ավելի մրցունակ դառնալու ակնկալիքով:

Սցենարի զարգացման դասընթացը ՌԱՍ նախագծի մի մասն է, որը ֆինանսավորվում է ԵՄ Արեւելյան գործընկերության «Մշակույթ» ծրագրի կողմից եւ իրականացվում է «Ոսկե ծիրան» կինոյի զարգացման հիմնադրամի եւ իր գործընկերների՝ MAIA (Իտալիա),Պրոմեթեւս կինոարվեստի կենտրոնի (Վրաստան) եւ INTERNEWS (Հայաստան) կողմից:

Սեմինարը բաղկացած է լինելու դասախոսություններից, օրինակների ուսումնասիրություններից, խմբային աշխատանքից եւ անհատական հանդիպումներից:

Աշխատաժողովի առաջնային նպատակն է ներգրավել սկսնակ սցենարիստների: Դիմումների ընդունման վերջնաժամկետը երկարաձգվում է մարտի 22-ից մինչեւ ապրիլի 1-ը:

**ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

# «Միացում» ֆիլմի երեւանյան պրեմիերա

Լաչինի՝ ներկայիս Բերձորի ազատագրման 20-ամյակի առթիվ երեկ «Մոսկվա» կինոթատրոնում տեղի ունեցավ «Միացում» ֆիլմի երեւանյան պրեմիերան:

Ֆիլմի բեմադրող ռեժիսոր եւ սցենարի հեղինակ Սամվել Թադեւոսյանը տեղեկացրեց, որ ֆիլմի նկարահանման աշխատանքները տեւել են 7 ամիս, իսկ ֆիլմի տեւողությունը 50 րոպե է, որի համար օգտագործվել են 5 օպերատորների փաստագրական կադրեր:

Նախագծի հեղինակ Տիգրան Մանասյանն երեկ լրագրողների հետ հանդիպմանը նշեց, որ ֆիլմը բաղկացած է երկու մասից, որոնք մանրամասն ներկայացնում են Արցախի պատմությունը:

Ս. Թադեւոսյանն էլ իր հերթին ավելացրեց, որ իրենց հիմնական նպատակը Արցախի պատմությունը ներկայացնելն է. «Հատկանշականն այն փաստն է, որ ֆիլմի երաժշտության հեղինակը 16-ամյա մի պատանի է, որը հիանալի երգեր է գրում»:

Մանասյանն ընդգծեց, որ ֆիլմի միջոցով իրենք նաեւ ցույց են տալիս, որ հայերի ձեռքերը արյան մեջ թաթախված չեն եւ հայերը պատրաստ են երկխոսության:

Ըստ նախանշված պլանների, ֆիլմը կմասնակցի ԱՄՆ-ի՝ ԱՐՓԱ, Կանադայի՝ «Նուռ» եւ «Ոսկե ծիրան» կինոփառատոներին:

Նշենք, որ այժմ բացի հայերենից, ֆիլմն ունի նաեւ ռուսերեն տարբերակ, իսկ առաջիկայում նախատեսվում է թարգմանել անգլերեն եւ թուրքերեն:

Ի դեպ, այն արդեն ցուցադրվել է Բերձորում եւ Ստեփանակերտում:

**Ս. Հ.**

# Մշակութային միջոցառում Փարիզի Yan's ակումբում

**Մառն-լա-Վալեի Հայկական մշակութային միությունը եւ Փարիզի Yan's ակումբը «Ազգին» տեղեկացնում են, որ ապրիլի 12-ին, ժամը 20-ին Yan's ակումբում տեղի կունենա Միշել Արմանեի եւ Ժան Մարտինյանի գրքի շնորհանդեսը, որը կավարտվի ընկերական ճաշկերույթով: Խոսքը «Ժան Մարտիկյանը եւ պատկերապատումը Անգուլեմից մինչեւ Արարատ լեռը» գրքի մասին է: Ժան Մարտիկյանը Սեւրի հայկական վարժարանի նախկին շրջանավարտ է եւ հայտնի է իր պատկերապատումներով (BD): Նույն միջոցառման շրջանակներում ժամը 21-ին ելույթ կունենա պատկերապատումների ոլորտում մասնագիտացած լրագրող Լորան Մելիքյանը եւ կպատմի Երեւանում անցկացված պատկերապատումների փառատոնի մասին:**



# «Հակոբ Հակոբյան. երկաթե երկեր» ցուցահանդես

Ինչպես հայտնել ենք արդեն, մարտի 26-ին Գաֆեսճեան արվեստի կենտրոնում կբացվի «Հակոբ Հակոբյան. երկաթե երկեր» ցուցահանդեսը: Ցուցադրությունն առաջին անգամ ի հայս է բերում քանդակի՝ որպես առանձին գեղարվեստական ուղղության զարգացումը Հակոբ Հակոբյանի արվեստում, ներկայացնելով արվեստագետի եռածավալ հորինվածքների լայն ընտրանի: Հավաքածուն ընդգրկում է 62 քանդակներ ստեղծագործական բոլոր շարքերից. մարդակերպ եւ կենդանակերպ ֆիգուրներ, թեմատիկ աշխատանքներ:

«Արվեստագետի գլխավոր թեման մարդն է»,- նշում էր Հակոբ Հակոբյանը: Սա է այն հիմնական ստեղծագործական սկզբունքը, որը տասնամյակներ շարունակ առաջնորդել է Վարպետին իր աշխատանքներում: Շուրջ քառասուն տարի աշխատելով վրձնով անցյալ դարի 80-ական թվականներին Հակոբյանը հայացքն ուղղեց դեպի քանդակը: Աշխատանքային գործիքների մարդակերպ եւ կենդանակերպ համադրումները, որոնք ի սկզբանե ստեղծվել էին որպես կտավների նոր բնակիչների նախակերպեր, աստիճանաբար սկսեցին ընկալվել որպես առանձին քանդակներ: Հարթաշուրթերի, աքցանների, մկրատների, բժշկական գործիքների տարատեսակ համակցումները ծնունդ տվեցին հակոբյանական նոր կերպարներին:

Գաֆեսճեան արվեստի կենտրոնից հայտնում են, որ ցուցահանդեսը կտեւի մինչեւ մայիսի 26-ը: Մուտքն անվճար է:

# «Անուշ» օպերայի նոր մեկնաբանություն

Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում ապրիլի 26-ին, 27-ին, մայիսի 3-ին, 4-ին տեղի կունենա «Անուշ» օպերայի երեւանյան պրեմիերան:

Ներկայացման բեմադրությունն ու լիբրետոների ադապտացիան կատարել է Սերժ Ավետիքյանը, հագուստների եւ բեմի ձեւավորումը՝ Նիկոլա Մյուզեն, գործիքավորումն ու երաժշտության վեամշակումը՝ Անահիտ Սիմոնյանը, իսկ դիրիժորը կլինի Վահան Մարտիրոսյանը:

Օպերայի մենակատարներն են. Անուշի դերում՝ Սոֆյա Սայադյանը, Սարո՝ Լիպարիտ Ավետիսյանը, Մոսի՝ Գուրգեն Բավեյանը, Անուշի մայր՝ Քրիստինա Սահակյանը, Սարոյի մայր՝ Լիլիթ Սողոմոնյանը:

Նշենք, որ փարիզյան պրեմիերան տեղի կունենա մայիսի 22-ին, 23-ին, 25-ին, 26-ին «Նանտեռի Ամանդյե» թատրոնում:

Ծրագիրն իրականացվում է Հայաստանի եւ Ֆրանսիայի մշակույթի նախարարությունների համատեղ նախաձեռնությամբ, ինչպես նաեւ Դելտա ասոցիացիայի, «Նանտեռի Ամանդյե» թատրոնի, Օ-դը-Սենի գլխավոր խորհրդի կողմից:

Գլխավոր հովանավոր՝ Վիվա-Սել-ՄՏՍ:

# «Grand Street Jam» պարային մրցույթը Դինամո մարզադահլիճում

Մարտի 30-ին Դինամո մարզադահլիճը պարի սիրահարներին հրավիրում է ներկա լինելու breakdance պարաոճում կայանալիք մրցույթին (սկիզբը ժամը 11:00, ֆինալը ժամը 16:00): «Hip-HopCongres Armenia» հ/կազմակերպության կողմից կազմակերպված այս մրցույթն իր շուրջ կհամախմբի 200-ից ավել մասնակցի: Ժյուրիի աշխատանքներին կմասնակցեն տարբեր երկրներից մասնագետներ: Սա Հայաստանում 1-ին պաշտոնական մրցույթն է, որը կխթանի Հայաստանում այդ պարաոճի զարգացմանը, փորձի փոխանակմանը, կնպաստի շնորհալի երիտասարդների բացահայտմանը: Հայաստանում պարային հեղափոխություն տեղի ունեցավ նաեւ 2012-ին փողոցային պարերի առկայությամբ, երբ կազմակերպությունը հանդես եկավ աննախադեպ «Armenian Street Dance Contest» պարային մրցույթով: Փողոցային պարերը, որոնք արդեն հայտնի են ամբողջ աշխարհում, Հայաստանում եւս շատ լավ ընդունվեցին:

**http://www.facebook.com/events/139323239570548/**

# Համերգ նվիրված Ռուսաստանի մշակույթի աշխատողների օրվան

Մարտի 29-ին Արամ Խաչատրյան համերգասրահում տեղի կունենա Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի համերգը նվիրված Ռուսաստանի մշակույթի աշխատողների օրվան: Մենակատար ջութակահար Մովսես Պողոսյան, դիրիժոր՝ Էդուարդ Թոփչյան: Իսկ ծրագրում կհնչեն Վաչե Շարաֆյան՝ Ջութակի կոնցերտ թիվ 2 «Con-Cor-Dance», Մենդելսոն՝ Ջութակի կոնցերտ, Չայկովսկի՝ Սիմֆոնիա թիվ 4:

## Շնորհանդես

*Մարտի 28-ին, ժամը 18:00-ին* Ավ. Իսահակյանի անվան գրադարանում (Նալբանդյան 4/1) կկայանա Իտալիայում Հայաստանի պատվավոր հյուպատոս պրն **Պյետրո Քուչուկյանի** *«Սփռվածները»* գրքի շնորհանդեսը՝ հեղինակի մասնակցությամբ:

# Արթուր Ալեքսանյանը կրկին ուժեղագույնն է Եվրոպայում



Թբիլիսիում ավարտվեց ըմբշամարտի Եվրոպայի առաջնությունը, որը հաջող էր Հայաստանի ըմբիշների համար: Հաջող հանդես եկան նաեւ հունահռոմեական ոճի ըմբիշները՝ նվաճելով մեկ ոսկե, 2 բրոնզե մեդալ:

Գերազանց ելույթ ունեցավ անցյալ տարվա Եվրոպայի չեմպիոն, Լոնդոնի ամառային օլիմպիադայի բրոնզե մրցանակակիր Արթուր Ալեքսանյանը, որը մինչեւ 96 կգ քաշային կարգում կրկին ուժեղագույնը ճանաչվեց: Արթուրը շատ վստահ անցկացրեց իր բոլոր 5 գոտեմարտերը, որոնցում մրցակիցներին ընդամենը մեկ միավոր զիջեց: Այդ միակ միավորը հաջողվել էր վաստակել վրացի ըմբիշ Սոսո Ջաբիձեին, որը 1/8 եզրափակիչում Ալեքսանյանին պարտվել էր 1-12 հաշվով: Իսկ մինչ այդ հայ ըմբիշը պայքարից դուրս էր մղել շվեդ Ստեֆան Շոնին:

Քառորդ եզրափակիչում Արթուրը 4-0 հաշվով հաղթեց թուրք Կենկ Իլդեմին, ապա նույնպիսի արդյունքով առավելության հասավ Ադրբեջանը ներկայացնող վրացի ըմբիշ Շալվա Գադաբաձեի նկատմամբ: Եզրափակիչ գոտեմարտում էլ Եվրոպայի չեմպիոնը դրսեւորեց իր վարպետությունը եւ 6-0 հաշվով հաղթելով բուլղարացի Վլադիսլավ Էմիլով Մետոդիեւին, պահպանեց ուժեղագույնի իր տիտղոսը:

Մինչեւ 84 կգ քաշային կարգում բրոնզե մեդալի արժանացավ Արթուր Շահինյանը: Հաջորդաբար հաղթելով լեհ Դամիան Յանիկովսկուն, հունգարացի Պետեր Բակսիին եւ ֆինն Անտի Հակալային, Շահինյանը մտավ կիսաեզրափակիչ: Այստեղ նրա հետագա ճանապարհը փակեց վրացի Վլադիմեր Գեգեշիձեն: Արթուրը պայքարը շարունակեց բրոնզե մեդալի համար: Հաղթելով բուլղարացի Խրիստո Մարինովին, հայ ըմբիշն արժանացավ բրոնզե մեդալի:

Բրոնզե մեդալով տուն վերադարձավ նաեւ գերծանրքաշային Վաչիկ Եղիազարյանը: Հաղթելով չեխ Դավիթ Վալային, Վաչիկը քառորդ եզրափակիչում պարտվեց ուկրաինացի Եվգենի Օռլովին: Վերջինս հասավ մինչեւ եզրափակիչ, ուստի հայ ըմբիշն իրավունք ստացավ վիճարկելու բրոնզե մեդալը: Առաջին գոտեմարտում Եղիազարյանը հաղթեց ռուսաստանցի Շոխրուդին Այուբովին: 2-րդ գոտեմարտը չկայացավ, քանի որ Եղիազարյանի մրցակից, բուլղարացի Լյուբոմիր Դիմիտրովը վնասվածք ուներ: Հայ ըմբիշը դարձավ բրոնզե մեդալակիր:

Բրոնզե մեդալ կարող էր նվաճել նաեւ մինչեւ 60 կգ քաշային Ալեքսան Միքայելյանը: Նա հաղթելով հունգարացի Իշտվան Կոզակին, 1/8 եզրափակիչում պարտվեց ռուսաստանցի Իվան Կույլակովին, որը մտավ եզրափակիչ: Բրոնզե մեդալի համար պայքարում Միքայելյանը պարտվեց Սլովակիայի ներկայացուցիչ Իշտվան Լեային:

Հարություն Հովհաննիսյանը (55 կգ) եւ Սասուն Ղամբարյանը (66 կգ) հասան մինչեւ քառորդ եզրափակիչ, իսկ Ռաֆիկ Մանուկյանը (74 կգ) պարտվեց 1/8 եզրափակիչում: Ի դեպ, մինչեւ 66 կգ քաշային կարգում բրոնզե մեդալակիր դարձավ Ֆրանսիան ներկայացնող Արտակ Մարգարյանը:

Մեդալների հաշվարկով Հայաստանի հունահռոմեական ոճի հավաքականը զբաղեցրեց 3-րդ տեղը՝ իրենից առաջ թողնելով Ռուսաստանի (2+2+1) եւ Բուլղարիայի (1+1+1) ըմբիշներին: Հիշեցնենք, որ մեր ազատոճային ըմբիշներն էլ Եվրոպայի առաջնությունում հաջող հանդես եկան՝ նվաճելով մեկական ոսկե եւ արծաթե մեդալ: Եվրոպայի չեմպիոն հռչակվեց Դավիթ Սաֆարյանը (66 կգ), իսկ Մուսա Մուրթազալիեւը (84 կգ) դարձավ արծաթե մրցանակակիր:

# Վարդան Մինասյանը հավասար է գնահատում մրցակիցների հնարավորությունները




Այսօր ժամը 20-ին «Հանրապետական» մարզադաշտում կտրվի ֆուտբոլի աշխարհի առաջնության Հայաստան-Չեխիա հանդիպման մեկնարկը: Խաղի նախօրեին Հայաստանի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ **Վարդան Մինասյանը** հանդիպեց լրագրողներին: Նա նշեց, որ հավաքականի բոլոր ֆուտբոլիստներն էլ մարտական տրամադրությամբ են նախապատրաստվել առաջիկա հանդիպմանը, բոլորն էլ հասկանում են խաղի կարեւորությունը եւ ամեն ինչ անելու են հաղթելու համար: Երիտասարդական հավաքականի հետ խաղում գլխավոր մարզիչը խաղային 2 դիրքում փորձարկումներ կատարեց ու ստացավ իրեն հուզող բոլոր հարցերի պատասխանները: Ճիշտ է, խաղի որակը չբավարարեց Վարդան Մինասյանին: Ամեն դեպքում չեխերի հետ այլ խաղ կլինի:

Այս պահին Վարդան Մինասյանն արդեն կողմնորոշվել է մեկնարկային կազմի 10 ֆուտբոլիստների հարցում: Մնում է վերջնական որոշում կայացնել Արաս Օզբիլիսի մասնակցության հարցում: Վերջինս արդեն մի քանի օր Երեւանում է եւ մասնակցում է հավաքականի մարզումներին: Հոլանդիայում անցկացված բուժզննմամբ պարզվել էր, որ Արասի վնասվածքը լուրջ չէ: Ճիշտ է, Օզբիլիսը 10 օր չի մարզվել: Մինասյանը նշեց, որ եթե նրա առողջությանը վտանգ չսպառնա, ապա անպայման Օզբիլիսը կընդգրկվի մեկնարկային կազմում: Հակառակ դեպքում նրա փոխարեն խաղադաշտ դուրս կգա Էդգար Մանուչարյանը:

Հավաքականի գլխավոր մարզիչն առանձնակի կարեւորություն չի տալիս այն փաստին, որ չեխերը Երեւան են ժամանել դանիացիներից սեփական հարկի տակ 0-3 հաշվով կրած պարտությունից հետո: Ըստ նրա, չեխերն ամեն դեպքում Երեւանում ձգտելու են հաղթանակի: Մինասյանը դիտել է չեխերի մասնակցությամբ վերջին 7 հանդիպումները: Չեխերի խաղաոճը չի փոխվել, մրցակցի ուժեղ եւ թույլ կողմերն էլ լավ հայտնի են մեր մարզչին: Դանիայի հավաքականի հետ չեխերի հանդիպումը Մինասյանը դիտել է հավաքականի անդամների հետ, վերլուծել են խաղը ու համապատասխան եզրահանգումներ կատարել: Գլխավոր մարզիչը մրցակիցների հաղթելու հնարավորությունները հավասար է գնահատում:

Իսկ ահա բուքմեյքերներն այսօրվա խաղում նախապատվությունը տալիս են չեխերին: Նրանց հաղթանակի գործակիցը 1,91 է: Հայաստանի հավաքականի հաղթանակի համար խաղադրույքներ են ընդունվում 4 գործակցով, իսկ ոչ-ոքին գնահատվում է 3,4 գործակցով:

# Լիլիթ Մկրտչյանը հետապնդում է առաջատարին

Հնդկաստանում ընթացող շախմատի մրցաշարի 7-9-րդ տուրերը հաջող էին Լիլիթ Մկրտչյանի համար: Հաղթելով Քրիստինա Ֆոյսորին եւ Մանիշա Կիրանին, հաշտություն կնքելով Էշա Կարավադեի հետ, Լիլիթը վաստակեց 6 միավոր ու տեղափոխվեց 2-րդ հորիզոնական: Հայ շախմատիստուհին ընդամենը մեկ միավոր է զիջում ռուսաստանցի Օլգա Գիրյային:

Էլինա Դանիելյանը վերջին 3 տուրերում 1,5 միավոր վաստակեց: Նա հաղթեց Ռութ Ռադմինիին, պարտվեց Քի Գույին եւ ոչ-ոքի խաղաց Օլգա Գիրյայի հետ: Էլինան 4,5 միավորով 6-րդ տեղում է:

## ՇԱԽՄԱՏ

# Արոնյանն առաջին պարտությունը կրեց

**Հանգստյան օրերին Լոնդոնում կայացած հավակնորդների մրցաշարի հերթական 2 տուրերը չսասանեցին առաջատարների դիրքերը: Լեւոն Արոնյանը Ալեքսանդր Գրիշչուկի եւ Մագնուս Կառլսենի հետ հաշտություն կնքելով, վաստակեց 5,5 միավոր: Նույնպիսի ցուցանիշի հասավ նաեւ Մագնուս Կառլսենը, որը 7-րդ տուրում Ռաջաբովի հետ մրցավեճում կարողացավ խուսափել պարտությունից եւ կես միավոր վաստակեց:**

**7-րդ տուրի բոլոր 4 պարտիաներն էլ խաղաղ ելք ունեցան: Հաշտություն կնքեցին նաեւ Գելֆանդն ու Կրամնիկը, Իվանչուկն ու Սվիդլերը: Իսկ ահա 8-րդ տուրում մնացած 3 պարտիաներն արդյունավետ ելք ունեցան: Գելֆանդն առաջին հաղթանակը տոնեց՝ պարտության մատնելով Ռաջաբովին: Հաղթանակի բերկրանքն առաջին անգամ վայելեց նաեւ Գրիշչուկն Իվանչուկի հետ պարտիայում: Իսկ Կրամնիկին վերջապես հաջողվեց ընդհատել 7 անընդմեջ ոչ-ոքիների շարքն ու առավելության հասնել Սվիդլերի նկատմամբ:**

**Երեկ կայացած 9-րդ տուրի հանդիպումներից հետո մրցաշարի միանձնյա առաջատարի դերը ստանձնեց Մագնուս Կառլսենը, որը հաշտություն կնքեց Վլադիմիր Կրամնիկի հետ ու վաստակեց 6 միավոր: Իսկ ահա Լեւոն Արոնյանը երկարատեւ պայքարից հետո սեւերով պարտվեց Բորիս Գելֆանդին՝ կրելով առաջին պարտությունը: Խաղաղ դաշն կնքեցին Պյոտր Սվիդլերն ու Ալեքսանդր Գրիշչուկը: Իվանչուկի եւ Ռաջաբովի մրցավեճը թերթի համարը տպագրության ուղարկելու պահին դեռ շարունակվում էր:**

**Արոնյանն ունի 5,5 միավոր: Նրան կես միավոր է զիջում Վլադիմիր Կրամնիկը: 4,5 միավոր ունի Ալեքսանդր Գրիշչուկը:**

**Այսօր մրցաշարում հանգստյան օր է: Իսկ վաղը կայանալիք 10-րդ տուրում Արոնյանը սպիտակներով կխաղա Իվանչուկի հետ: Կառլսենի մրցակիցը կլինի Գելֆանդը: Կկայանան նաեւ Ռաջաբով-Սվիդլեր, Գրիշչուկ-Կրամնիկ պարտիաները:**

# Աբրահամը պաշտպանողական մարտավարության զոհը դարձավ



**Ռոբերտ Շտիգլիցին հաջողվեց հետ վերցնել WBO-ի վարկածով 2-րդ միջինքաշային կարգում աշխարհի չեմպիոնի գոտին, որը նրանից անցյալ տարվա օգոստոսին խլել էր Արթուր Աբրահամը: Մագդեբուրգում կայացած մենամարտում Արթուրն իր ընտրած պաշտպանողական մարտավարության զոհը դարձավ: Շտիգլիցը շատ ագրեսիվ սկսեց մենամարտն ու անընդհատ գրոհում էր: Արթուրը թեեւ փորձում էր փակել դեմքը, սակայն մրցակցի հարվածներն իրենց «սեւ» գործն արեցին: 2-րդ ռաունդում Աբրահամի ձախ աչքն այտուցվել էր, իսկ 3-րդ ռաունդում արդեն փակվել էր: Ուստի բժիշկը չթույլատրեց Արթուրին շարունակելու հանդիպումը՝ տեխնիկական նոկաուտով հաղթանակ գրանցելով Շտիգլիցի օգտին:**

**Այսպիսով, Արթուր Աբրահամը զրկվեց չեմպիոնի տիտղոսից, որը միայն մեկ անգամ էր հաջողությամբ պաշտպանել: Մենամարտից հետո Արթուրի մենեջերը ռեւանշ-մենամարտ է պահանջել Շտիգլիցի թիմից, որն ընդունվել է: Առայժմ դժվար է ասել, թե երբ կկայանա մրցակիցների 3-րդ մրցավեճը:**

# Դանիացիներն անակնկալ մատուցեցին

**Ֆուտբոլի աշխարհի առաջնության ընտրական մրցաշարի 2-րդ խմբում մեծ անակնկալ մատուցեցին դանիացիները՝ հյուրընկալվելիս 3-0 հաշվով հաղթելով չեխերին: Խմբի մյուս խաղում բուլղարացիները 6 անպատասխան գնդակ ուղարկեցին Մալթայի հավաքականի դարպասը: Նույնպիսի հաշիվ գրանցվեց նաեւ Ավստրիա-Ֆարերներ մրցավեճում: Իսկ ամենախոշոր հաշվով հաղթանակն իրենց օգտին գրանցեցին անգլիացիները, որոնք մրցակցի հարկի տակ 8-0 հաշվով ջախջախեցին Սան Մարինոյի հավաքականին: Անգլիայի հավաքականը կրկնեց իր ռեկորդային ցուցանիշը, որը գրանցվել էր 1987-ին Թուրքիայի ընտրանու հետ խաղում: Սան Մարինոյի հավաքականն ընտրական մրցաշարում բոլորից վատ է հանդես գալիս՝ պարտվելով բոլոր 5 հանդիպումներում ընդհանուր 0-24 հաշվով:**

**A խմբում Բելգիայի եւ Խորվաթիայի հավաքականները հերթական հաղթանակները տոնելով, 13-ական միավորով գլխավորում են աղյուսակը: Խորվաթները 2-0 հաշվով հաղթեցին սերբերին, բելգիացիները 2 անպատասխան գնդակ ուղարկեցին մակեդոնացիների դարպասը: Շոտլանդիա-Ուելս հանդիպումն ավարտվեց հյուրերի հաղթանակով (2-1):**

**Աշխարհի եւ Եվրոպայի չեմպիոն Իսպանիայի հավաքականը սեփական հարկի տակ չկարողացավ հաղթել ֆիններին: Սերխիո Ռամոսի խփած գոլին ֆինները պատասխանեցին Պուկկիի գոլով: Իսկ ահա ֆրանսիացիները սեփական հարկի տակ 3-1 հաշվով պարտության մատնելով վրացիներին, շրջանցեցին իսպանացիներին ու գլխավորեցին I խմբի աղյուսակը:**

**H խմբում առաջատարը Չեռնոգորիայի ընտրանին է, որը հյուրընկալվելիս 1-0 հաշվով հաղթեց մոլդովացիներին: Ուկրաինայի հավաքականն էլ մրցակցի դաշտում 3-1 հաշվով առավելության հասավ լեհերի նկատմամբ:**

**Եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով Հս. Իռլանդիա-Ռուսաստան հանդիպումը հետաձգվեց անորոշ ժամանակով: Ռուսները 12 միավորով գլխավորում են F խմբի աղյուսակը: 8-ական միավորով առաջատարին հետապնդող Իսրայելի եւ Պորտուգալիայի հավաքականների մրցավեճում գրանցվեց մարտական ոչ-ոքի՝ 3-3: Ընդ որում պորտուգալացիները պարտվում էին 1-3 հաշվով: Միայն ավելացված ժամանակում նրանց հաջողվեց խուսափել պարտությունից:**

**Մյուս խաղերում գրանցվեցին հետեւյալ արդյունքները. Կիպրոս-Շվեյցարիա՝ 0-0, Շվեդիա-Իռլանդիա՝ 0-0, Ղազախստան-Գերմանիա՝ 0-3, Հոլանդիա-Էստոնիա՝ 3-0, Հունգարիա-Ռումինիա՝ 2-2, Անդորրա-Թուրքիա՝ 0-2, Նորվեգիա-Ալբանիա՝ 0-1, Սլովենիա-Իսլանդիա՝ 1-2, Լյուքսեմբուրգ-Ադրբեջան՝ 0-0, Բոսնիա-Հունաստան՝ 3-1, Սլովակիա-Լիտվա՝ 1-1, Լիխտենշտեյն-Լատվիա՝ 1-1:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Բերեզովսկին Ադրբեջանի՞ց գնաց



Մահացածի վաստակի գնահատման հայտնի խոսք կա՝ «տնի՞ց գնաց, թե՞ ժողովրդից»: Բորիս Բերեզովսկու մահվան առթիվ միջազգային մամուլի ամենատարբեր ենթադրությունների շարքում, այս իմաստով, առանձնացնելի է vesti.az-ի անդրադարձը (տես՝ http://www.vesti.az/news/152247): Ադրբեջանական լրատվամիջոցը, առանց աղբյուր նշելու, Բերեզովսկուն է վերագրել հետեւյալ միտքը. «Լինելով ԱՊՀ գործադիր քարտուղար, ես զբաղվել եմ Ղարաբաղի խնդրով եւ զգացել, որ Հեյդար Ալիեւը եւ Ռոբերտ Քոչարյանը ցանկություն եւ կամք ունեն, որպեսզի գտնեն խաղաղ լուծում: Եվ՝ որ որոշումն, անկասկած, գտնվում է փոխզիջումների մեջ»: Ըստ vesti.az-ի, Բերեզովսկին նման միտք արտահայտել է «այժմ հանգուցյալ Իբրահիմ Բայանդուրլիի հետ հարցազրույցում:

Հանգուցյալ Բերեզովսկին գուցե ինչ-որ ժամանակ Ռուսաստանի իշխող էլիտայի ներկայանալի դեմքերից մեկն է եղել: Բացառված չէ, որ նրա «համաշխարհային տնտեսության վերակառուցման» երեւակայության մեջ մի տեղ էլ ունեցած լինի ԼՂ խնդրի «փոխզիջումային» կարգավորմամբ Կասպից ավազանի էներգակիրների դեպի Ռուսաստան կամ Եվրոպա տարանցման հարցի լուծման տեսլականը: Բերեզովսկին «լայն քայլի» ֆինանսատնտեսական գործիչ էր, մարդ, ում մասին, կարելի է չկասկածել, մահվանից հետո ավելի շատ է գրվելու, քան կենդանության օրոք:

Ինչո՞ւ է ադրբեջանական իշխանամետ լրատվամիջոցը մտասեւեռվել Բերեզովսկու անձի եւ հատկապես ԼՂ հարցում «արագ լուծումների հասնելու» նրա արդեն անցյալի գիրկը նետված տեսակետի վրա: Այս իմաստով հետաքրքրական է vesti.az-ի հարցազրույցը ՌԴ Քաղաքական տեխնոլոգիաների կենտրոնի առաջին փոխնախագահ Ալեքսեյ Մակարկինի հետ: Պատասխանելով ադրբեջանական լրատվամիջոցին հետաքրքրած հարցին, Մակարկինը պատասխանել է. «Նա (Բերեզովսկին) ձգտում էր շատ հարցերում, այդ թվում եւ Ղարաբաղի, խաղալ «ղեկանվորդի» դեր: Նրա խնդիրն այն էր, որ միշտ չէ, որ հասկանում էր կողմերի հոգեբանությունը, ինչպես ասում են, «նրանց չափում էր իրենով. գործում էր իրեն բնորոշ սխեմաներում»:

Շարունակությունը մեզ համար որեւէ հետաքրքրություն չի ներկայացնում: Մենք չգիտենք՝ ի՞նչ է ձեռնարկել Բորիս Բերեզովսկին, որպեսզի «ԼՂ հարցի շուտափույթ կարգավորմամբ» ինչ-որ բիզնես նախագծերի մաս կազմի անձամբ կամ՝ ի դեմս ՌԴ «ազգային-պետական» շահերի: Տվյալ դեպքում չափազանց ցցուն է Ադրբեջանում իշխող վարչախմբի շահերն սպասարկող լրատվամիջոցի հետաքրքրվածությունը Բերեզովսկու ընդհատակյա գործունեությամբ:

Չմոռանանք, որ Բերեզովսկին մահկանացուն կնքել է Մեծ Բրիտանիայում: Իսկ դա երկիր է, որի խոշորագույն նավթային ընկերությունը՝ «Բրիթիշ պետրոլիումը», Ադրբեջանի տնտեսական «վերածննդի» գլխավոր կնքահայրն է: Մեծ Բրիտանիան միաժամանակ, զգուշորեն ասենք, Ադրբեջանում իշխող վարչախմբի սեփականության «կտակատարներից» է: Եվ ի՞նչ դեր ուներ դրանում Բորիս Բերեզովսկին՝ գուցե հայտնի դառնա տասնամյակներ անց:

Գաղտնիք է նաեւ, թե Բերեզովսկու «անձնական» սեփականության ո՞ր մասն է ԼՂ խնդիրն «արագորեն լուծելու» ուղղությամբ նրա ջանքերի «արդարացի փոխհատուցումը»: Ամեն ինչ սքողված է գաղտնիության շղարշով: Այդուհանդերձ, Ադրբեջանում իշխող վարչախումբն այն աստիճան է ապաշնորհ, որ Բերեզովսկու մահվան առթիվ հրապարակումներում ուրվագծելի է դարձրել հարցադրումը. «Իսկ գուցե Բորիս Աբրամովիչը գնաց Ադրբեջանի՞ց»:

**Վ. Ա.**

# ՎիվաՍել-ՄՏՍ-ն՝ ԶԼՄ-ների միջեւ մինի-ֆուտբոլի մրցաշարի հովանավոր



«Գրանդ Սպորտ» մարզահամալիրում մեկնարկեց Հայաստանի ԶԼՄ-ների միջեւ մինի-ֆուտբոլի չորրորդ մրցաշարը: Մրցաշարի կազմակերպիչն է Արտասահմանյան թղթակիցների ասոցիացիան: ՎիվաՍել-ՄՏՍ-ն ստանձնել է մրցաշարի հովանավորությունը: Մրցաշարն ուղղված է առողջ ապրելակերպի քարոզչությանը եւ ֆուտբոլի մասսայականացմանը:

Մրցաշարի հանդիսավոր բացմանը մասնակիցներին ողջունեց Արտասահմանյան թղթակիցների ասոցիացիայի նախագահ **Տիգրան Հովհաննիսյանը**: Բացման արարողությանը մասնակցեց նաեւ ֆուտբոլի վետերան, վաստակավոր մարզիչ Սեմյոն Իսրայելյանը: Պարային համարով իր մասնակցությունն ունեցավ նաեւ «Արաբկիր» պարային համույթը:

Մրցաշարին կմասնակցի mamul.am, News.am, emedia.am կայքերի, «Արեւածաղիկ», «Ֆինանսներ եւ էկոնոմիկա» ամսագրերի, Mediamax գործակալության, «4-րդ իշխանություն» թերթի եւ Արտասահմանյան թղթակիցների ասոցիացիայի լրագրողներից ձեւավորված 8 թիմ:

Կանոնակարգի համաձայն, թիմերը վիճակահանությամբ բաժանվել են երկու խմբի: Նախատեսված է առաջին փուլի հանդիպումները կազմակերպել շրջանաձեւ եղանակով: Խմբերի լավագույն երկու ցուցանիշ արձանագրած թիմերը կանցնեն կիսաեզրափակիչ փուլ, որի հաղթողները կմասնակցեն եզրափակիչ խաղին: Թիմերը կմրցեն նաեւ երրորդ տեղի համար:

Մրցաշարի փակման արարողությունը կկայանա ապրիլի 6-ին: Հաղթող թիմը կպարգեւատրվի «ՎիվաՍել-ՄՏՍ-2013» գավաթով, մեդալներով եւ պատվոգրերով: Երկրորդ եւ երրորդ տեղեր զբաղեցրած թիմերը եւս կստանան գավաթներ, պատվոգրեր եւ մեդալներ: Մրցանակների կարժանանան նաեւ 10 անվանակարգում աչքի ընկած խաղացողները՝ լավագույն դարպասապահը, պաշտպանը, հարձակվողը, ռմբարկուն, երկրպագուն, խաղացողը, ֆուտբոլի վետերանը, թիմի ղեկավարը, ամենագեղեցիկ գոլի հեղինակը եւ մրցաշարը լավագույնս լուսաբանող լրագրողը:

ԱԹԱ-ն ունի սիրողական մրցումներ կազմակերպելու մեծ փորձ: 2000 թվականից սկսած՝ ասոցիացիան մրցաշարեր է կազմակերպել ՀՀ-ում արտասահմանյան դեսպանատների (Քաղաքակրթությունների երկխոսության գավաթ), ՀՀ ձեռնարկությունների (Made in Armenia գավաթ), ՀՀ-ում հավատարմագրված բանկերի աշխատակիցների եւ բուհերի ուսանողների (Լեւ Յաշինի գավաթ) թիմերի միջեւ անցկացրել է բարեգործական խաղեր, որոնցից ստացված հասույթը փոխանցել է հանրապետության մանկատներին: 2002 եւ 2009 թվականներին ԱԹԱ-ն Երեւանում եւ Ստեփանակերտում ՀՀ եւ ԼՂՀ նախագահների հովանու ներքո կազմակերպել է ԱՊՀ եւ Բալթյան երկրների լրագրողական մրցաշարեր:

ВТБ

**«ՎՏԲ - Հայաստան Բանկ» ՓԲԸ հայտարարում է մասնաճյուղերում հերթերի կառավարման համակարգի եւ էլեկտրոնային ինֆորմացիոն վահանակների համար 32” եւ 42” անկյունագծով հեռուստացույց մոնիտոր ձեռք բերելու համար մատակարար կազմակերպություններ ընտրելու բաց մրցույթ**

Մրցութային առաջարկություններն անհրաժեշտ է ներկայացնել ՎՏԲ–Հայաստան Բանկ ՓԲԸ՝ ՀՀ, ք. Երեւան, 0010, Նալբանդյան փ. 46 հասցեով:

Մրցութային հայտերն ընդունվում են մինչեւ **2013թ.** Ապրիլի **25-ը**, ժամը 17:00 ներառյալ:

Մրցութային հայտերի բացումը տեղի կունենա **2013թ.** Ապրիլի **26-ին**, ժամը17:00:

Մրցույթին մասնակցելու հրավերն ու Մրցույթի պայմանները տեղադրված են «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ ինտերնետային կայքում՝ **www.vtb.am**:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ, Մրցութային կոմիտե,

Հասցեն՝ ՀՀ, ք. Երեւան, 0010, Նալբանդյան փ. 46,
Կոնտակտային անձ՝
Լուսինե Սուսանյան
Հեռ. +(37410) 51-37-49, ներքին՝ 8 3302
Էլ. փոստ՝ **l.susanyan@vtb.am**
Հեղինե Մելքումյան
Հեռ. (+37410) 51-37-16
Էլ. փոստ՝ **h.a.melkumyan@vtb.am**

*Հավելված N 2*
*Հայաստանի Հանրապետության*
*կենտրոնական ընտրական հանձնաժողովի*
*2012 թ. փետրվարի 6-ի N 26-Ն որոշման*

**ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 6-ԻՑ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ**

| Աղբյուրները | Չափը (հազ. դրամով) |
|---|---|
| 1 | 2 |
| **1. Մնացորդները առ 06.08.2012 թ.** | |
| դրամական միջոցներ | - |
| անշարժ գույք | - |
| շարժական գույք | - |
| **2. Դրամական մուտքերը 06.08.2012-31.12.2012 թթ.** | |
| այդ թվում՝ | |
| իրավաբանական անձանցից | - |
| ֆիզիկական անձանցից | - |
| բյուջետային ֆինանսավորում | - |
| **3. Ծախսեր** | |
| այդ թվում՝ | |
| աշխատավարձ | - |
| կոմունալ վճարներ եւ վարձակալություն | - |
| հարկեր, տուրքեր | - |
| գործուղման եւ տրանսպորտային ծախսեր | - |
| այլ ծախսեր | - |
| **4. Մնացորդները առ 31.12.2012 թ.** | |
| դրամական միջոցներ | - |
| անշարժ գույք | - |
| շարժական գույք | - |

***Ռամկավար Ազատական կուսակցության Հանրապետական վարչության ատենադպիր՝ Սուրեն Սարգսյան***

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Շահամիր Շահամիրյան» կրթահամալիրը հայտարարում է մրցույթ ուսուցիչների թափուր աշխատատեղերի համար հետեւյալ առարկաներից՝ իսպաներեն, անգլերեն, հայոց լեզու եւ գրականություն, շախմատ:
Հասցեն՝ Երեւան, Լենինգրադյան փ. 4/ա, հեռ.՝ 39-11-10:

«Ազգի փրկություն» կուսակցությունը 2012 թ. ֆինանսական մուտք եւ ելք չի ունեցել:
Կուսակցության նախագահ՝
***Ս. Կարապետյան***

«Սոցիալ Դեմոկրատ հնչակյան» կուսակցությունը 2012 թ. ֆինանսական մուտքեր եւ ելքեր չի ունեցել:
ՍԴՀԿ ատենապետ ***Գ.Պերկուպերկյան***

**ՀՊՃՀ (ՊՈԼԻՏԵԽՆԻԿ)**



**մարմնակրթության եւ սպորտի կենտրոնը հրավիրում է բոլոր ցանկացողներին մարզվելու կենտրոնում գործող հետեւյալ խմբակներում՝ լող, բազկամարտ, սեղանի թենիս, բասկետբոլ, աթլետիզմ: Ձեզ հետ կաշխատեն բարձրակարգ մասնագետներ: Ցանկացողներին խնդրում ենք զանգահարել 010567784: Հասցե՝ Տերյան 105, ՀՊՃՀ, 21-րդ մասնաշենք:**

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 25.3.2013, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: